Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՒԱՐ

9 (583)
18.04.2020
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՓՈՐՁԸ ՄԵԾ ԱՐԺԵՔ Է ԵՎ ՉՊԵՏՔ Է ԿՈՐՑՆԵԼ

«Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը «Հեռավար կրթության մարտահրավերներն ու հնարավորությունները արտակարգ դրության պայմաններում» առցանց լսումների ժամանակ հետաքրքիր դիտարկումներ է արել: Ներկայացնելով իր պատկերացումները, որոնք նաև այս օրերին տարբեր երկրներում՝ Հոլանդիայում, Անգլիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում և այլուր ապրող իր գործընկերների հետ շփումներից ստացած տպավորություններն են, ասաց, որ կրթությունն այլևս նախկինը չի լինի, և շատ մեծ փոփոխություններ են բոլորն ակնկալում, ու դրանք անխուսափելի են. «Մենք ունենք երկու ճանապարհ. կամ մնալ 19-րդ դարում, կամ այս պահն օգտագործել, որպեսզի բոլոր զարգացած երկրների հետ թռիչքաձև անցնենք 21-րդ դար»: Նրա խոսքով՝ որպես երկիր այս պահին այլընտրանքի առջև ենք կանգնած և ամեն բան պետք է անենք, որ այս օրերին ձեռք բերած փորձը կիրառենք: Մեջբերում է Անգլիայի լավագույն դպրոցներից մեկի տնօրենի խոսքը. «Տպավորությունն այն է, որ կարծես մինչև հիմա ծովի ջուր չէինք մտել, վախենում էինք ծովից, ստիպված բոլորս թռանք այդ ծովի վրայով, որ փրկվենք և իրար օգնելով՝ մի կերպ փրկվեցինք: Իհարկե, մենք չենք ուզում ծովահարս դառնալ, բայց հիմա արդեն ծովից հեռու ապրել չենք ուզի, կապրենք ծովի ափին»: Այսինքն՝ այդ զգացողությունը, որ իրավիճակ է փոխվել, կա բոլոր մարդկանց մոտ, և նրանք ամեն բան անելու են, որպեսզի այդ փորձառության լավագույն պտուղները պահպանեն: Իսկ որ այդ պտուղները կան, ակնհայտ է:

Այսպես, շատ էինք խոսում ներառականության մասին, որն սկզբնական շրջանում պատկերացնում էինք, թե վերաբերում է միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին: Որոշ ժամանակ անց ասում էինք, որ ներառականությունը լինելու է բոլորի համար, քանի որ ամեն երեխա անհատականություն է, և յուրաքանչյուրին պետք է կրթություն տալ իրեն համապատասխան: Սա ասում էինք որպես տեսլական, իսկ իրականությունը շատ հեռու էր դեռ: Առցանց ուսուցումն արագացրեց այդ խնդրի լուծումը: Բոլո՞ր երեխաների համար է, արդյոք, առցանց ուսուցումը: «Էքստրովերտ երեխաների համար առցանց կրթությո՛ւնն է ավելի դժվար, ինտրովերտների համար փրկություն է: Ներառականությունը պետք է վերաբերի ամեն երեխայի: Չկա այլևս ներառական երեխա, ոչ ներառական երեխա. ամեն երեխա ունի առանձնահատկություններ, և կրթական համակարգը պետք է զանազանություն բերի»,- այս օրերին դրանում ավելի է համոզվել Ա. Փախչանյանը: Եվ պարզաբանում է. ներառականությունը ուսուցչին ընձեռում է ամեն երեխայի համար ընտրել լավագույն գործիքներ ու նրա հետ այդ գործիքներով համագործակցության հնարավորություններ: Առցանց միջոցներով կրթությունը ինքնըստինքյան դառնում է անհատականացված: Այն գործիքները, որոնք կիրառվում են, ինքնըստինքյան բերում են նրան, որ ամեն ուսուցիչ ամեն երեխայի հետ անհատական կապի մեջ է մտնում և համապատասխանաբար արձագանքում է նրա խնդիրներին:

☞3

ՊԱՏԳԱՄ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Դու ես Քրիստոս. կեանք եւ յարութիւն ազգի մարդկան»

(Շարական)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Քրիստոսի Հրաշափառ Հարությունը մեր Սուրբ Եկեղեցու երանաշնորհ հայրերը սքանչելի օրհներգությամբ են փառաբանել գեղեցկահյուս աղոթքներում ու շարականներում՝ բերելով մեր ժողովրդին կյանքի անսպառ հույսի և փրկության ավետիսը. «Դու ես, Քրիստոս, մարդկային ազգի կյանքն ու հարությունը»:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր երկրային կյանքի ընթացքում բազում անգամներ հայտնեց Իր չարչարանքների և Հարության մասին, որի իմաստը նույնիսկ առաքյալները հստակությամբ չէին ըմբռնում: Քրիստոսի խաչելությունից հետո նրանք հուսահատ փակվել էին վերնատան մեջ և տարակուսում էին հավատալ Փրկչի Հարության մասին յուղաբեր կանանց ավետիսին: Սակայն Հարուցյալ Քրիստոսի հետ հանդիպումից հետո տխրությունը վերափոխվեց Տիրոջ հետ միասնության երանության: Տիրոջ խաչելության և մահվան հարուցած ցավը փոխակերպվեց Փրկչի հաղթության բերկրանքի, վշտի մռայլ գիշերը՝ հարության տիեզերանորոգ արշալույսի: Եվ քրիստոնեության լույսն ու վարդապետությունը հաղթականորեն տարածվեցին ողջ աշխարհում՝ մարդկության կյանքն ուղղորդելով դեպի փրկություն ու հավիտենություն:

Քրիստոսի Հարության բերկրալի ավետիսը առանձնակի հուսառատությամբ ու մխիթարությամբ է արձագանքում մտահոգիչ մեր ժամանակներում, երբ մարդկությունը կրում է վիշտ ու տառապանք, զրկանք ու կորուստներ, վերապրում համընդհանուր տագնապ ու ճգնաժամ: Այս տարվա զատկական կենսանորոգ տոնակատարությունը ողջ աշխարհում բազում հավատացյալներ անցկացնում են մեկուսի, շատեր՝ հեռու իրենց սիրելիներից ու մտերիմներից: Համավարակի ներկա բարդ պայմաններում նաև մեր եկեղեցիներում առանց հավատացյալների ենք կատարում սրբազան արարողությունները, բայց վստահ ենք, որ դուք, սիրելիներ, հոգով, մտքով ու ձեր աղոթքներով մեզ հետ եք, և միասնաբար ու միասիրտ ենք նշում սքանչելախորհուրդ այս տոնը: Քրիստոսի Հարությունը մարդկային գոյության նորոգումն է և հավիտենության պարգևը բոլորիս: «Ես եկա, որպեսզի կյանք ունենան և առավել ևս ունենան»,- ասում է Տերը (Հովհ. 10.10): Քրիստոսի պարգևած կյանքը մեր առօրեական դժվարություններից ու հոգսերից վեր նոր իրականություն է, ուր Աստծո կամքն է տնօրինվում, ուր Տիրոջ պատվիրաններն ու պատգամները արդյունավորվում են երկնահաճո իրագործումներով, և կյանքի խավարը վերածվում է այգաբացի:

Աշխարհով մեկ տարածված համավարակը մարտահրավեր է՝ ուղղված մարդկությանը, բայց հատկապես՝ մարդկայնությանը: Հավատում ենք, որ մարդկությունը կհաղթահարի համավարակի այս ծանր կացությունը և դրանով պայմանավորված բոլոր դժվարությունները սոցիալական, տնտեսական, կրթական, հասարակական ոլորտներում: Սակայն առավել էական է, որ անշրջելի հաղթանակ արձանագրվի անմարդկային բոլոր դրսևորումների, նյութապաշտության, աղքատության, անհավասարության, ռազմատենչության, պատերազմների և այլ չարիքների դեմ: Մարդկության մեջ եղել են և այսօր էլ կան մարդասիրության, համերաշխության, ժողովուրդների իրավունքների պաշտպանության, հանուն բարիքի համատեղ գործելու բազում վկայություններ, որոնք լուսավոր ուղենիշ են աշխարհի նոր ընթացքի համար: Մարդկությունը պետք է գիտակցի՝ առաջընթացի ու երջանկության երաշխիքը Աստծով ապրված կյանքն է, որ դառնում է օրհնության, ուժի ու զորության աղբյուր:

Աստծո ողորմությամբ այս փորձությանն էլ աշխարհը կդիմագրավի: Սակայն կենսականորեն կարևոր է այդ հաղթահարման հետ դառնալ ավելի ուժեղ, միասնական ու համախմբված, հոգեպես զորացած՝ Աստծուն մշտապես ունենալով մեզ առաջնորդ ու ապավեն: «Ա՛յս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը»,- ասում է առաքյալը (Ա Հովհ. 5.4): Այո՛, սիրելիներ, Հարության հավատքով, մեր կյանքում Փրկչի ներկայության գիտակցությամբ մենք ի զորու կլինենք լուծման առաջնորդելու մեր ժողովրդի առջև հառնած խնդիրները և կերտելու այն լուսավոր ապագան, որ երազում ենք բոլորս: Քաջ գիտենք, որ դուք աշխարհում ամենուր դիմակայում եք առկա նեղություններին ու դժվարություններին: Բոլոր հանգամանքներում, սակայն, մեր պատրաստակամությունն ու հանձնառությունը պիտի դրսևորվի՝ հոգ տանելու նաև մեր հայրենիքի և մեր քույրերի ու եղբայրների հանդեպ: Վերստին կոչ ենք հղում ի հայրենիս և ի սփյուռս Մեր ժողովրդի զավակներին՝ համավարակի դժվարին իրավիճակը հաղթահարելու, հիվանդների ապաքինման միջոցներն ու խնամքը հոգալու, խիստ նեղության մեջ հայտնված հայորդիներին օգնության ձեռք մեկնելու գործում հնարավոր զորակցություն բերելու հայրենի իշխանություններին և ընծայաբերումներ կատարելու պետության կողմից այս նպատակով բացված հատուկ հաշվեհամարին: Մեր Եկեղեցին այս օրերին աշխարհասփյուռ իր թեմերով ավելիով իր ջանքերն է ներդնում օժանդակություն ցուցաբերելու կարիքավորներին, հոգևոր խնամք և մխիթարություն մատուցելու մեր ժողովրդի զավակներին հայրենիքում և համայն աշխարհում: Բարեպաշտ զավակներ Մեր, Տերունապատվեր սիրով ու հոգատարությամբ շաղախենք մեր կյանքն ու գործը, ամուր պահենք համազգային միասնությունն ու համերաշխությունը՝ որպես Քրիստոսով հաղթանակած, Քրիստոսին հավատարիմ հարուցյալ ժողովուրդ: Ապրենք հարության հավատով, Քրիստոսի պատվիրանների իրագործման նախանձախնդրությամբ՝ նոր հաղթանակներով ու պայծառ երազներով կերտելու մեր բարօր, շեն ու հզոր հայրենիքը և նրա լուսավոր գալիքը:

Այս մաղթանքով Քրիստոսի հրաշափառ Հարության քաջալերող ավետիսն ենք բերում Մեր հոգևոր եղբայրներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր Եկեղեցիների հոգևոր Պետերին և մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգևոր դասին՝ հայցելով Երկնավոր մեր Տիրոջ օգնականությունն ու պահպանությունը: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Արմեն Սարգսյանին և Հայաստանի Հանրապետության վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանին, Արցախի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն՝ մաղթելով ուժ ու կորով դժվարին իրավիճակները հաղթահարելու և հայրենի պետությունը առաջընթացի ու բարօրության ուղիներով առաջնորդելու: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս, ի մասնավորի՝ Մեր բարձր գնահատանքը ստեղծված ծանր պայմաններում իրենց երախտարժան ծառայությունը մատուցող բժիշկներին, մեր հաղթական բանակի քաջարի զինվորներին ու սպաներին, ոստիկաններին, ուսուցիչներին, գովարժան սպասավորություն իրականացնող բոլոր նվիրյալ անձանց:

Աղոթք ենք բարձրացնում առ Փրկիչ մեր Տերը, որ Հարության Իր լուսեղեն շնորհները տարածյալ պահի համայն մարդկության, հայրենի մեր երկրի, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդի վրա, ազատի փորձություններից և պարգևի խաղաղություն և երկնահեղ անսպառ օրհնություն: Թող Քրիստոսի Հարության և կյանքի հաղթանակի բարի ավետիսը մշտահունչ լինի մեր սրտերում ու հոգիներում: Եվ միասնաբար, Քրիստոսով քաջալեր ու զորացած, փորձությունները հաղթահարելով և մեր նոր կյանքը կերտելով՝ միշտ փառաբանենք Ամենակալն Աստծուն Իր անսահման սիրով մեզ պարգևած փրկության և հավիտենական կյանքի անգին շնորհների համար:

Մնացեք Տիրոջ սիրո, շնորհի և օրհնության ներքո այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՇՈՒՇԻԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2020 թվականը մարտահրավեր նետեց Երկիր մոլորակի մարդկությանը: Դեռևս 2019թ. Չինաստանի Ուհան քաղաքում բռնկված նոր կորոնավիրուսի համավարակը մի քանի ամիսների ընթացքում վերածվեց համաշխարհային սպառնալիքի՝ տարածվելով ողջ աշխարհով մեկ: Երկրագնդի ավելի քան 200 երկրներում մոլեգնող համաշխարհային հիվանդության պայմաններում, որն ստիպում է մարդկանց ինքնամեկուսանալ՝ համավարակից զերծ մնալու և պաշտպանվելու համար, ՀՀ-ում, ԱՀ-ում, ինչպես ողջ աշխարհում, կրթական հաստատություններն անցել են հեռավար կրթության:

Աշխարհը դիմակայում է համաշխարհային սպառնալիքին՝ ձեռնարկելով կանխարգելիչ և ընթացքը վերահսկող բոլոր միջոցները, չնայած համավարակի՝ անողոք կերպով տարածվելուն: Մահասփյուռ հիվանդությունը տարածվում է անխնա՝ խտրականություն չդնելով մեծատունի և տնանկի միջև: Աշխարհի ավելի քան 1 600 000 բնակիչ վարակված է թագաժահրով, երկրագնդի բնակչության 100 000-ից ավելին մահացած է տվյալ պահի դրությամբ, և թվերը ժամ առ ժամ աճում են… Համավարակի դեմ պայքարում է բժշկագիտության ողջ անձնակազմը, համաշխարհային գիտափորձը: Աշխարհը ձգտում է հայտնաբերել հիվանդությունը կանխարգելող և բուժող դեղամիջոցը… Կենսագործունեության յուրաքանչյուր ոլորտ յուրովի պայքարում է աներևույթ թշնամու դեմ՝ գործադրելով բոլոր հնարավոր միջոցներն ընդդեմ մի հիվանդության, որն ուզում է կլանել Աստծու ստեղծած մարդկային կյանքը Երկիր մոլորակի վրա: Ավետարանի Եփեսացիս թղթում գրված է. «Ձեր վրա հագեք Աստծոյ սպառազինությունը, որպես զի կարող ըլլաք սատանային հնարներուն դեմ դնել… Ասոր համար ձեր վրա առեք Աստուծոյ սպառազինությունը, որպես զի կարող ըլլաք չարության օրը դեմ դնել… » (Եփես. 6:11, 13):

Ստեղծված պայմաններում որևէ կերպ չի նվազում մատաղ սերնդի կրթության դերն ու անհրաժեշտությունը: ՀՀ և ԱՀ ԿԳՍՆ-երի կողմից ձեռնարկված օնլայն դասերը ուսանելի ուղեցույցներ են, և դպրոցների ուսուցիչները ջանասիրաբար վարում են ժամանակի պահանջին համահունչ հեռավար ուսուցում դպրոցականների և սովորողների համար:

Երբ հիվանդանոցներում կենաց և մահու պայքար է գնում անգամ կյանքի գնով պահպանելու հիվանդների կյանքը, ստեղծված արտասովոր իրավիճակի պայմաններում պակաս կարևոր չէ մատաղ սերնդի ուսուցումը կարանտինային պայմաններում: Online ուսուցումն առայժմ ամենաարդյունավետ աշխատանքն է մատաղ սերնդի կրթության շարունակականության գործում: Կարելի է ասել, որ հեռավար ուսուցումը միակ փրկօղակն է՝ աշակերտներին չկտրելու ուսուցումից: Եվ մանկավարժներից պահանջվում են զգալի ջանքեր ուսուցումը ճիշտ կազմակերպելու նպատակով: Համաշխարհային վարակի մահաբեր սպառնալիքի պայմաններում, երբ վարակը ժամ առ ժամ սկսում է տարածվել Արցախի սահմաններից ներս, պահանջվող ողջախոհ և զգուշավոր քայլերի և պաշտպանիչ բժշկական ուղղորդումների կիրառմամբ իրականացնում ենք հեռավար կրթություն դպրոցներում:

Մեզ մոտ արդեն ապրիլի 12-ից մտցված արտակարգ իրավիճակի պայմաններում, պահպանելով անհրաժեշտ ինքնամեկուսացումը, ըստ դասացուցակների անց ենք կացնում դասապարապմունքները: Միաժամանակ հետևում ենք հեռահաղորդվող փորձառու մասնագետների հեռուստադասերին, որոնք խթանիչ դեր են կատարում:

ԿԳՍՆ-ի կողմից ներկայացվել են այն բոլոր հարթակները, որոնց օգնությամբ կազմակերպվում են հեռավար դասապարապմունքները:

Այս գործում մեծ պատասխանատվությամբ իրենց աշխատանքներն են իրականացնում նաև Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի մանկավարժները: Ուսուցիչը բարեխիղճ է բոլոր իրադրություններում. ինչպես դասարաններում, այնպես էլ հեռավար հարթակում աշխատելիս: Նրանք օգտվում են տարբեր հավելվածներից: ԿԳՍՆ-ի կողմից առաջադրվել է ZOOM հարթակը, որը, ըստ իս, ամենաառաջնայինն է: Տեսակապի միջոցով համակարգչի էկրանին երևում է ամբողջ դասարանը: Ուսուցիչը դասին մասնակից է դարձնում բոլոր աշակերտներին, ստուգում մատուցված դասի յորացվածությունը անհրաժեշտ հարցերով և ստանում դասի յուրացման պատկերը յուրաքանչյուր դասարանում: Դասերին գրագիտորեն կիրառվում են մի շարք դիդակտիկ նյութեր՝ դասանյութը դարձնելով տեսանելի և ավելի մատչելի: Դասանյութի մատուցման ժամանակ օգտագործելով համակարգչի էկրանի վրա պարունակվող նախօրոք պատրաստված նյութը word-ի, exzel-ի միջոցով, լուսանկարի տեսքով, դասն ավելի արդյունավետ ենք դարձնում: Դիդակտիկ անհրաժեշտ պիտույքներից է համակարգչային գրատախտակի օգտագործումը: Մեր կրթօջախում ZOOM հարթակով աշխատելուն մեծապես նպաստել է դպրոցի հատուկ մանկավարժ Գայանե Իշխանյանը, որը մեծահոգաբար կոլեկտիվի մի մասին սովորեցրել է, թե ինչպես կիրառել վերոնշյալ հարթակը:

Ուսուցիչների կողմից գործածվում են նաև Viber, watsApp հարթակները:

Դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանի հաղորդած տվյալներով՝ բոլոր ուսուցիչները կարողանում են իրականացնել հեռավար ուսուցումը՝ կիրառելով տարբեր մեթոդներ և հաղորդակցման միջոցներ:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվն ակտիվորեն կատարում է իր առջև դրված պարտականությունները: Կոլեկտիվի բոլոր անդամները՝ 50 մանկավարժ, կատարում են ինտենսիվ աշխատանք. դպրոցի 610 աշակերտներին, որոնք ընդգրկված են 23 կոմպլեկտ դասարաններում՝ 26-35 աշակերտների ծանրաբեռնվածությամբ, մասնակից են դարձնում հեռավար դասապրոցեսներին՝ կատարելով ահռելի աշխատանք:

Տարրական օղակի 9 դասարանների դասվարները, ծնողների հետ համագործակցելով, նվիրված աշխատանք են կատարում: Միջին օղակի 11 դասարաններում առարկայական մասնագետները խորացնում են աշակերտների գիտելիքները: Ավագ օղակի 3 դասարաններում, որոնք գործում են բնագիտական և հումանիտար հոսքերով, սաները շարունակում են խորացված գիտելիքներ ստանալ հմուտ մանկավարժների շնորհիվ: Դպրոցում գործող 7 հանձնաժողովների՝ տարրական, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի, օտար լեզվի, մաթեմատիկայի, բնագիտության և պատմության մեթոդմիավորումների նախագահներն իրենց անդամների հետ կապվում են և տեղեկացնում հրահանգների մասին՝ միաժամանակ իմանալով, թե ինչ աշխատանք է տարվում:

Ծնողներն իրենց գոհունակությունն են հայտնում ուսուցիչների կատարած աշխատանքի առնչությամբ: Առանձին ուսուցիչներ ստվար դասարանները կիսում են երկու մասի, որ դասերն ընկալելի լինեն աշակերտների կողմից, ինչպես օրինակ, տնօրեն Լիանա Հարությունյանը, հայոց լեզվի ուսուցչուհի Սուսաննա Ստեփանյանը, այլք:

Կրթության ասպարեզը նվիրյալներինն է, և այդ գործում իրենց ակնառու դերն ունեն Շուշիի շրջանի ամենամեծ կրթօջախի՝ Խ.Աբովյանի անվան դպրոցի մանկավարժները, որոնք անբասիր աշխատանքով կերտում են հայրենի դպրոցի պատմությունը՝ անմնացորդ աշխատելով նաև արտակարգ իրադրության պայմաններում:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ Է

Արցախի ԿԳՍ նախարարի 2020թ. մարտի 13-ի հ. 19 /Ա հրամանով ուսումնական հաստատություններում ժամանակավորապես դադարեցվեցին պարապմունքները, չեղարկվեցին մշակութային, մարզական և այլ զանգվածային միջոցառումներ:

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ ու առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպվեցին կանխարգելիչ, հակահամաճարակային մի շարք միջոցառումներ, դպրոցական հաստատություններում սահմանվեց հերթապահություն 3-4 հոգանոց խմբերով:

Մարտի 22-ից հետո ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը սկսեց կազմակերպվել հեռավար եղանակով:

Թե ինչպես է այն կազմակերպվում, ինչ խնդիրներ ու անհարմարություններ են ծագում մանկավարժների մոտ, փորձեցինք ճշտել Խնապատի Ա.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Լյուդմիրա Մոսիյանից և ուսումնական գործընթացի պատասխանատու, փոխտնօրեն Գայանե Աղաբաբյանից:

Հանդիպումը դպրոցում էր, որը հնարավորության սահմաններում ապահովված էր կանխարգելիչ միջոցներով, պահպանվում էին սանիտարահակահամաճարակային կանոնները: Ներկա ուսուցիչներն աշխատում էին առանձին-առանձին՝ հեռավորություն պահպանելով, որը՝ ուսուցչանոցում, որը՝ կաբինետում:

Դպրոցի տնօրենի հավաստմամբ պահպանվում են հակահամաճարակային միջոցառումները, սահմանված է հերթապահություն, չնայած տարիքով ուսուցիչներն ավելի



շատ են ներկայանում, որպեսզի երիտասարդներն օգնեն իրենց: Ուսուցիչներն օգտվում են տարբեր հարթակներից (dasaran.am, imdproc.am, viber, whatsApp, zoom), որը որ իրենց հարմար է: Հիմնականում նյութերը վերցնում են imdproc.am -ից, նոր դասերը տեղադրում են dasaran.am-ում կամ օգտվում հենց դրանից: Viber-ով տեղեկացնում են առաջիկա դասերի մասին, վարում դասերը, պատասխանում աշակերտների հարցերին: Հեռավար դասերի համար (խմբային կամ ընդհանուր) հաճախ են օգտագործում zoom հարթակը:

Սովորողների ներկայության ապահովումը, սակայն, հնարավոր չէ ամբողջությամբ կազմակերպել: Տարրական դասարանների ծնողներն անպայման պետք է ներկա գտնվեն, իսկ նրանք աշխատանքից երբեմն ուշ են տուն գալիս, և գործընթացը որոշակիորեն տուժում է: Որոշ տներում էլ ընդհանրապես բացակայում է կապը: Աշակերտները լավ չեն վարժված dasaran.am- ից օգտվելու կանոններին, ինչն էլ նրանց համար դժվարացնում է գործընթացը:

Մանկավարժների համար հիմնականում ուղեցույցը dasaran.am հարթակում տեղադրված «Դասեր» գործիքն է:

«Ամեն օր հետևում եմ նրանց աշխատանքին,- ասում է դպրոցի ընօրեն Լյուդմիրա Մոսիյանը:- Բոլոր ուսուցիչները մեծ պատասխանատվությամբ են կատարում իրենց ուսերին դրված այս ծանր աշխատանքը, որ թելադրված է արտակարգ իրավիճակով: Նրանք հարթակ են մտնում տարբեր ժամերի: Փոքր երեխաներ ունեցող ուսուցիչները նախընտրում են ավելի ուշ ժամերը, քանի որ և՛ համացանցն է այդ ժամերին թեթև, և՛ իրենց է հարմար: Այնպես որ, չաշխատող ուսուցիչ չունենք: Բայց ինչ էլ լինի, մենք կարոտով ու անհամբերությամբ ենք սպասում զանգի ղողանջներով կազմակերպվող դասերին ու ավելի շատ՝ մեր սաներին: Առկա ուսուցմանը ոչինչ չի կարող փոխարինել: Ինչ արած, հարմարվում ենք իրավիճակին ու հույսով սպասում լուսավոր օրերի»:

Դպրոցի ուսմասվար Գայանե Աղաբաբյանի գործը նոր իրավիճակի թելադրանքով ավելի է մեծացել. ստիպված է ամեն օր դպրոց գնալ, համացանցից նյութեր առանձնացնել՝ ուսուցիչներին օգնելու համար: Նա նշում է, որ տարրական և միջին դասարաններում դասավանդող ուսուցիչների համար է ծագում հիմնական դժվարությունը, քանի որ այդ դասարանների երեխաները տեխնիկական սարքերից օգտվելու հմտություններ դեռևս չունեն, հեռախոս կամ համակարգիչ էլ չունեն: Բայց երբ հունի մեջ ընկան, սկսեց աշխուժություն տիրել նրանց մոտ: Եթե վարժվում են հարթակից օգտվելուն, գործը հեշտանում է, իսկ գլխավոր խնդիրը թույլ կապի առկայությունն է:

Ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով նա անընդհատ որոնումների մեջ է: Իր վկայությամբ՝ գերադասում է dasaran.am հարթակը, որովհետև աշակերտները համեմատաբար լավ են տիրապետում, ծանոթ են նրան, և հնարավոր է դառնում համաժամանակյա դասեր վարել: Այն հարցին, թե ինչպես է ապահովվում կապը երեխաների հետ, փոխտնօրենը պատասխանեց, որ դրանք շատ տարբեր են. տարբեր դասարաններ, տարբեր մակարդակներ: Դասացուցակն էլ կապ չունի այդ ընթացքում, խիստ պարտադրված չէ: Ամեն երեխա իրեն հարմար պահի մտնում է հարթակ, կատարում հանձնարարությունը և ներկայացնում ուսուցչին:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Վերջին շրջանում ՀՀ-ում կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված՝ փակվել են դպրոցները, բուհերը, մանկապարտեզները, կրթական այլ հաստատություններ: Ցավոք, ապրիլի 7-ին Արցախում գրանցվեց կորոնավիրուսով վարակվածության առաջին դեպքը: Արդեն տևական ժամանակ է, ինչ Արցախի բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով ոչ միայն ուժեղացվել է պետական վերահսկողությունը Հայաստանից Արցախ վերադարձողների նկատմամբ, այլև ժամանակավոր փակվել են Արցախի Հանրապետության կրթական հաստատությունները: Ինչքան կտևի այս իրավիճակը՝ պայմանավորված է հետագա զարգացումներով:

Ուսումնական ծրագրից շատ ետ չմնալու նպատակով ԱՀ ԿԳՍ նախարարությունը մշակել է ծրագիր, համաձայն որի հանրապետության կրթական հաստատությունները պետք է իրականացնեն հեռավար ուսուցում:

Որքանո՞վ է հեռավար ուսուցումը հասանելի աշակերտներին և ուսուցիչներին, որքանո՞վ է արդյունավետ նման ուսուցման իրականացումը՝ պարզելու համար դիմեցինք շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Զորիկ Ղուլյանին:

Բաժնի վարիչի տեղեկատվությամբ հեռավար ուսուցում է իրականացվում շրջանի 36 հանրակրթական դպրոցներում և 7 մասնաճյուղերում: Հեռավար ուսուցմանը ներգրավված են ուսուցիչների 80%-ից ավելին, աշակերտների՝ 80-90%-ը: Ուսուցման կազմակերպման գործում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ոչ բոլոր աշակերտներն ունեն ժամանակակից հեռախոսներ և համակարգիչներ, միևնույն ընտանիքում կան 3-4 դպրոցահասակ երեխաներ, բոլոր ընտանիքներում չէ, որ համացանցից օգտվելու հնարավորություն կա, համացանցն աշխատում է խափանումներով: Բայց, չնայած վերոնշյալին, հնարավոր բոլոր միջոցներն օգտագործվում են ուսումնական ծրագրից ետ չմնալու և գործընթացն արդյունավետ շարունակելու համար: Նշվեց նաև, որ հեռավար ուսուցում չեն իրականացվում հիմնականում ֆիզկուլտուրա, կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն առարկաներից: Այս ուսուցման առավելությունն այն է, որ աշակերտներն անգործության չեն մատնվում, և իրականացվում է ուսումնական ծրագիրը, սակայն այն չի կարող փոխարինել ավանդական ուսումնական գործընթացին:

«Ժամանակակից արագ փոփոխվող տեխնոլոգիաների աշխարհում հեռավար ուսուցման իրականացումը բնականոն գործողություն է, քանզի այսօր աշխարհը կարիք ունի ճկուն և արդյունավետ ուսումնառության, որը հնարավորություն կտա ցանկացած վայրում, ցանկացած ժամանակ անհատական տեմպերով ուսում ստանալ նրանց, ովքեր ունեն դրա կարիքը: Համացանցի և վեբ տեխնոլոգիաների արագ զարգացումը մեզ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև օգտագործողների շրջանում փոխգործունեության և համագործակցության հնարավորություն է տալիս»,- մեր զրույցի ժամանակ ասաց Զ.Ղուլյանը:

«Հեռավար ուսուցման գործընթացը հետաքրքիր փորձ է ինչպես աշակերտների և ուսուցիչների, այնպես էլ ծնողների համար: Ավելացել է ծնողների մասնակցությունը դասապատրաստմանը: Ինքս էլ աշխատում եմ տնից: Հեռավար ուսուցման իրականացումն այս օրերին պարզապես անհրաժեշտություն է: Սա միակ ճանապարհն է սահմանված ժամանակացույցից ետ չմնալու համար»,- հավելում է Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Զուլիետա Սարգսյանը:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ Է

Գնահատումը կատարվում է նամակագրական կապի միջոցով: Գ. Աղաբաբյանը շեշտում է, որ ՀՀ հանրային հեռուստատեսության ներկայացրած հեռավար դասերը, որ վարում են արհեստավարժ մասնագետները, միշտ դպրոցի ուսուցիչների ուշադրության կենտրոնում են: Նրանք իսկույն որոնում-գտնում են ու մատուցում երեխաներին: «Իրավիճակը պարտադրող է, պարտադրանքն էլ ապարդյուն չի անցնում,- փաստում է փոխտնօրեն Գ.Աղաբաբյանը:- Որպես ուսմասվար՝ աշխատում եմ որոշ չափով թեթևացնել մեր ուսուցիչների ուսերին ծանրացած այս բեռը: Ինձ համար հարմար հարթակ է dasaran.am-ը, ինչ նյութ որ հանդիպում է, իսկույն մտածում եմ՝ սա այս ուսուցչի համար է, սա՝ մյուսի, և այդպես շարունակ: Ասեմ ավելին. որպեսզի մեր երեխաների առօրյան հետաքրքիր դառնա, Ապրիլի 7-ի Մայրության ու գեղեցկության տոնը իսկական տոն դարձնելու նպատակով անակնկալ եմ մատուցել երեխաներին և նրանց մայրիկներին: Առաջարկել եմ մայրիկների հետ միասին դիտել «Առակ մայրիկի մասին» հրաշալի ստեղծագործությունը, դիտելուց հետո հանձնարարել՝ արձագանքեն իմ եզրակացությանը. «Եթե կատարել եք իմ հանձնարարությունը, ուրեմն ձեր մայրիկն այս պահին հուզված է ու ժպտում է: Ուրեմն նա երջանիկ է: Ապրե՛ս, ի՛մ սանիկ, դու երջանկացրիր քո մայրիկին, գո՞հ ես քեզնից: Ուղարկիր «այո» կամ «ոչ այնքան» պատասխանները»: Արձագանքները բազմաթիվ էին՝ հաճելի ակնթարթներով ցողված: Այսպես փորձում ենք մեղմել մեր երեխաների այս ոչ օրինաչափ առօրյան»:

Գայանե Աղաբաբյանը մասնակցում է նաև ՀՀ և Արցախի Հանրապետության ուսուցիչների համար ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին: Ստուգարքը հաջողությամբ հանձնելուց հետո նրանց հավաստագիր կտրամադրվի՝ ծրագրին տիրապետելու և հեռավար դասեր վարելու համար:

Ահա այսպես ամեն կրթօջախ այս անորոշ իրավիճակից դուրս գալու ուղիներ է որոնում ու իր առջև ծառացած խնդիրներին յուրովի լուծումներ տալիս, ուղիներ փնտրում՝ մեղմացնելու խախտված ուսուցման գործընթացի՝ իրավիճակով թելադրված շարունակականության այս տարբերակը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՓՈՐՁԸ ՄԵԾ ԱՐԺԵՔ Է ԵՎ ՉՊԵՏՔ Է ԿՈՐՑՆԵԼ

1 Այն գաղափարն էր հնչում, թե դաս-դասարանային համակարգը հնացել է: Այս միտքը հնչել է նաև Արցախի կրթական ֆորումի ժամանակ: Ասվել է, որ ավանդական այդ հասկացությունն աստիճանաբար վերանում է: Վերանում է ավանդական դասը, երբ ուսուցիչը կանգնում է գրատախտակի մոտ, մի բան բացատրում, հետո բոլորը միասին հաջորդ օրն անցնում են այլ թեմայի: Յան Ամոս Կոմենսկու ստեղծած դաս-դասարանային համակարգը, որ արդեն 300 տարուց ավելի տարածված է ամբողջ աշխարհում, հիմա արդեն ընթանում է այլ համակարգի կայացման ուղղությամբ: Ճիշտ է, այնքան էլ շատ չէին նոր ուղղությամբ գնացողները: Բայց հիմա արագորեն մանկավարժական աշխարհայացք է փոխվում:

Ասվում էր, որ դպրոցը երեխաների սոցիալականացման լավագույն միջոց է: Ա. Փախչանյանի համոզմամբ՝ այդպես չէ. «Երեխաներին պարտադրաբար բերել դպրոց և 6 ժամ նստեցնել սեղանների շուրջը՝ սոցիալականացման լավագույն փորձառությունը չէ: Կարելի է երեխաներին ներգրավելու շատ լավ սոցիալականացման ճանապարհներ գտնել. համատեղ նախագծեր, ամառային ճամբարներ և այլն: Այնպես որ, «դասական դպրոց» հասկացությունը նոր մոտեցում է պահանջում. սթափ նայել այս նոր իրականության տեսանկյունից և վերանայել մոտեցումը, որովհետև նախկին մոտեցումն արդեն հնացել է, վերջ, այն արդեն գոյություն չունի»:

Առցանց ուսուցումը միանգամայն ակնհայտ դարձրեց աշակերտների և ուսուցիչների գերծանրաբեռնվածությունը: Ծնողի ներգրավվածությունը երեխաների կրթության գործընթացում հիմա դարձել է իրական: Այս երևույթը շատ դրական ազդեցություն ունի երեխաների վրա: Այդ մասին բազմաթիվ հետազոտություններ կան, դա փաստ է, և այդ փաստը հիմա մենք տեսնում ենք մեր աչքերով:

Ա. Փախչանյանը կարևոր մի խնդրի վրա է ուշադրություն հրավիրում. արդյո՞ք կրթությունը պետք է լինի անհատականացված, թե պետք է լինի բոլորի համար նույնը: Առցանց կրթության պարագայում կարևոր է դառնում ձևավորող հետադարձ կապը. երեխային ասել՝ ինչն է ճիշտ, ինչն է սխալ, որտեղ կարող է զարգանալ: Սա շատ ավելի արդյունավետ է աշխատում: Իսկ գնահատականները դառնում են երկրորդական. «Համակարգ, որը չի աշխատում 90-ական թվականներից, և ապացուցված է, որ թվանշանային գնահատումը աբսուրդ է, մենք շարունակում ենք դա անել 30 տարի: Այժմ հնարավորություն է ստեղծվել բացառելու, տանք այն, ինչ ամբողջ աշխարհում համարվում է ճիշտ՝ հետադարձ ձևավորող կապը»:

Անդրադառնալով առցանց ուսուցման համար մեթոդաբանության ստեղծման անհրաժեշտությանը՝ Ա. Փախչանյանը գտնում է, որ այդ հարցում ոչ թե նոր, այլ ճիշտ մեթոդաբանություն է պետք. «Այն գործիքները, որոնցով հիմա ուսուցիչներն առցանց աշխատում են, արդյունավետ աշխատում էին նաև դասարանում: Եվ այն գործիքները, որոնք հիմա չեն աշխատում, չէին աշխատում նաև դասարանում, ուղղակի մենք այդ մասին չգիտեինք: Թվում է, թե դրանք աշխատում են, թվում է, թե երեխան դասարանում նստած լսում է: Չի լսում, նա իր մտքերի հետ է, որովհետև յոթ րոպեից ավել խոսող ուսուցչին երեխան արդեն չի լսում: Մենք դրան ուղղակի առնչվեցինք հերթական անգամ: Եվ ուրախացանք, քանի որ արդեն չափելի է այդ գործընթացը, և տեսնում ենք՝ որն է արդյունավետ, որը՝ ոչ»:

Փախչանյանը կարևորեց դասապրոցեսի կազմակերպման հարցում աշակերտների տեսակետները հաշվի առնելը՝ ընդգծելով, որ իրենց «Այբ» դպրոցը, լսելով աշակերտների տեսակետները, որոշել է հրաժարվել տնային հանձնարարություններ տալու պրակտիկայից: «Տնային» հասկացությունը ինքնըստինքյան վերանում է: Կա աշխատանքի ծավալ, որի արդյունքում երեխան ձեռք է բերում որոշ հմտություններ: Ինչքան այդ ծավալն ավելի արդյունավետ անի, այնքան ավելի այդ հմտությունը ձեռք կբերի: Առցանց ուսուցման ձևաչափով աշակերտները չեն շեղվում, ամեն մեկն իր տանը նստած՝ կենտրոնացած աշխատում է: Նրանք նյութը կարողանում են յուրացնել առանց հավելյալ տնային աշխատանքի: Այնպես որ, նրանց աշխատանքի ծավալն իրականում նվազում է ավելի արդյունավետ աշխատելու շնորհիվ»:

Այդքանով հանդերձ, Փախչանյանը չի պնդում, թե կրթությունը կդառնա առցանց: Բայց ասում է, որ հետաքրքիր հիբրիդային մոտեցում է ձևավորվելու, և այդ մոտեցումը դառնալու է ոչ միայն դպրոցական կրթության, այլ նաև համալսարանական կրթության մաս, և հետո կյանքի՝ աշխատանքի մաս: Նա օրինակ է բերում աշխարհի ընկերություններին, որոնք հասկացել են, որ օֆիսները պետք չեն, ուղղակի սովորության համաձայն պահում են, քանի որ ուրիշներն անում են, և իրենք էլ են անում, որպեսզի տարօրինակ չթվան: Եվ ասում են, որ հիմա օֆիս չեն վերադառնա: Շատերը փակել են offise-ային տարածքները, ստեղծել են co-working-ներ (համագործակցություն, աշխատանքի կազմակերպման մոտեցում), որտեղ մարդիկ աշխատում են:

Այսպիսով, աշխարհն է փոխվել, և դրան համապատասխան անխուսափելիորեն դպրոցական միջավայրը պետք է փոխվի: «Երեխաները չեն հասկանա, եթե նրանց նորից խցկեն դասարանները, և ուսուցիչը հին ձևով սկսի նրանց հետ խոսել: Զարմանալու են, թե ինչու այդ դեպքում իրենք այդքան տանջվեցին, այդքան հմտություններ ձեռք բերեցին, որ հիմա չեն օգտագործելու»:

Շատերի պես Փախչանյանը դրական է վերաբերվում այս ամենին. «Կարծում եմ, որ հետաքրքիր փորձ ձեռք բերեցինք, հետաքրքիր փորձառություն: Սա շատ մեծ արժեք է, և մենք իրավունք չունենք այդ արժեքը կորցնելու»: Նա հրավիրում է բոլոր շահագրգիռ մարդկանց ուշադրությունը և կոչ անում օրենսդիրներին՝ կրթության համակարգում հաշվի առնել այս փորձառության կիրառման հնարավորությունները մոտակա ժամանակաշրջանում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ ԿԳՈՅԱԿՅԵՆ, ՉԵՆ ՄՐՑԻ, ԱՅՆ ԿԾԱՌԱՅԻ ՄԵԶ. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Միլիարդավոր դոլարների ներդրումներ կատարելով արհեստական բանականության ոլորտում՝ կքաղենք դրանց պտուղները բժշկության, տիեզերքի հետազոտության և գիտության այլ ճյուղերում: Աբու Դաբիում լույս տեսնող The National պարբերականը Opinion («Տեսակետ») խորագրի ներքո ներկայացրել է Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի մտորումները.

Եթե 200 տարի առաջ Չինաստանում համաճարակ լիներ, ապա այն Եվրոպա կհասներ միայն տարիներ հետո: Այսօր, երբ առաջին դեպքերը տեղի ունեցան Չինաստանում, երկրորդ ալիքը կարող է արձանագրվել Արգենտինայում կամ Նյու Յորքում: Նույնն է տեղի ունենում ֆինանսական ռիսկերի դեպքում:

Շատ գլոբալ ռիսկեր, իրոք, ի հայտ են գալիս նման արագությամբ: Եվ եթե մենք ցանկանում ենք գնահատել դրանք և գտնել լուծումներ, ապա պետք է փոխենք մեր վերաբերմունքը՝ օգտագործելով ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության կենսունակ ու հարմարվողական մեթոդները:

Առաջին երեք արդյունաբերական հեղափոխությունները բացատրելու համար դյուրին էին: Առաջինի դեպքում մենք բացահայտեցինք՝ ինչպես այրել վառելանյութ արտադրության գործարկման համար, երկրորդի դեպքում մեր կյանքն ավելի լավը դարձնելու նպատակով օգտագործեցինք էլեկտրականությունը, իսկ երրորդին սովորեցինք՝ ինչպես օգտագործել համակարգիչները:

Նույնիսկ եթե աշխարհն անցնում է չորրորդ արդյունաբերական հեղափոխության միջով, որտեղ թվային, կենսաբանական և ֆիզիկական աշխարհները հանդիպում են արհեստական բանականության ոլորտում, համեմատաբար լավ չի ընկալվում, թե նոր հաշվողական տեխնոլոգիաներն ինչպես կհարմարեցվեն մեր բնական ինտելեկտին:

Այս տարվա սկզբին կայուն զարգացման համար աշխարհի առաջատար հարթակներից մեկում՝ «Աբու Դաբիի կայունության շաբաթի» ընթացքում, ես ներկայացրի իմ տեսակետն արհեստական բանականության ապագա ազդեցության մասին: Որպես նախկին մաթեմատիկոս, ֆիզիկոս և համակարգչային գիտնական, որն աշխատել է դրա առաջին մոդելների վրա, կարծում եմ՝ որևէ էական պատճառ չկա արհեստական բանականությունից վախենալու համար: Մարդկային քաղաքակրթության գեղեցկությունն այն է, որ փոփոխությունը, զարգացումը և մտահոգությունը քայլում են ձեռք ձեռքի տված: Մենք պետք է կառավարենք այս իրականությունը և լուծումներ տանք: Կարծում եմ՝ արհեստական բանականությունն ու մարդիկ կգոյակցեն, չեն մրցի, և արհեստական բանականությունը կծառայի մեզ, ոչ թե հակառակը: Ավելին, ճիշտ այնպես, ինչպես նախորդ բոլոր հեղափոխություններն ավարտվեցին ավելի շատ աշխատատեղերի ստեղծումով, քան դրանք փակելով, նույնը կլինի նաև չորրորդ արդյունաբերական հեղափոխության պարագայում: Եվ այս նոր աշխատատեղերն օգտակար կլինեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար:

Աշխարհն այսօր շատ արագ է փոխվում, և, իմ կանխատեսմամբ, մենք չենք կարողանալու տարբերակել այսօրվա չորրորդ հեղափոխությունը հինգերորդից կամ վեցերորդից ու այդպես շարունակ:

Նախորդ յուրաքանչյուր փոփոխություն անհանգստություն էր առաջացնում, թե այն ինչպիսի ազդեցություն կունենա մեր կյանքի վրա և արդյո՞ք աշխատատեղեր կխլի. Luddites-ից սկսած, որը պայքարում էր մեքենայացման դեմ, մինչև այն վախը, որ համակարգիչները մեզ բոլորիս անգործ կդարձնեն:

Համաշխարհային քաղաքականության ավանդական կառուցվածքն անցնում է հարմարեցման փուլով: Այս ամենը ենթադրում է, որ մենք անհապաղ պետք է օժանդակենք մեր առկա աշխատուժին: Հիմնարար նոր գաղափարների աճի դեֆիցիտը և խնդիրներին ոչ ստանդարտ լուծումներ գտնելու կարիքը հանգեցնում են հմտությունների և տաղանդների ավելի լայն շրջանակի գոյության անհրաժեշտության, քան նախկինում էր:

Դասական քաղաքական պրիզմայում կարևոր նշանակություն ունեին կապի կազմակերպված ձևերը՝ ցեղերը, ազգերը, կրոնները, գաղափարախոսությունները, կուսակցությունները և քաղաքական ինստիտուտները: Այդ համատեքստում անցումը քվանտային քաղաքական աշխարհին եղավ ավելի արագ, անկանխատեսելի և, թվում է, թե անկանոն ձևով: Այսօր մենք գտնվում ենք քվանտային քաղաքականության, քվանտային վարքագծի և քվանտային ազդեցության նոր դարաշրջանում, ինչը նաև դժվարացնում է ամբողջ պատկերը տեսնելը, քանի որ այդ ամենը ևս նոր է և գլոբալ:

Մինչ մարդկային արարածներիս համար ամբողջական պատկերը դեռևս կարող է աղոտ լինել, արհեստական բանականությունը գալիս է օգնության: Ապահովելով միլիարդավոր դոլարների ներդրում՝ մենք քաղում ենք արհեստական բանականության պտուղները բժշկության, տիեզերքի հետազոտության, գիտությունների այլ ոլորտներում: Սա է ապագան, որը փոխելու է մեր մտածելակերպն ու կենսակերպը: Արհեստական բանականության՝ աստիճանաբար կատարվող ինտեգրացիան գիտությունից ամենօրյա կյանք արդեն իսկ սկսել է ծառայել որպես տեխնոլոգիական և քաղաքակրթական առաջընթացի շարժիչ ուժ: Դպրոցները, ինստիտուտներն ու համալսարանները պետք է հարմարվեն այս նոր իրողություններին՝ նախ և առաջ մրցունակ լինելու, ինչպես նաև արդյունավետորեն ներգրավվելու մեր ընդհանուր ապագայի կերտման գործընթացում: «Համաշխարհային ռիսկերի քվանտային վարքագիծը» իմ գրքում, որը շուտով լույս կտեսնի, ես փորձում եմ բացատրել, թե ինչպես են համաշխարհային ռիսկերը դառնում քվանտային: Մենք պետք է հասկանանք, որ հաշվի առնելով, թե ինչպես է մարդկային կյանքը զարգանում թվային աշխարհում, այն պետք է ազդի ռիսկերի վրա, ինչպիսիք են՝ համաճարակներ, ահաբեկչություն, ֆինանսական ճգնաժամեր:

Այս ամենի եզրահանգումներից մեկն այն է, որ կանայք ունենալու են ավելի մեծ հնարավորություններ, քան նախկինում: Շատ կանանց բացառիկ փորձը՝ որպես սնուցողներ և սոցիալական հոգացողներ, եղել է շատ մշակույթների սրտում և կենսական նշանակություն է ունեցել կայուն հասարակություն ձևավորելու գործում: Եթե մենք կարողանանք զարկ տալ այսպիսի փորձառություններին՝ կառուցելու կայուն հարաբերություններ բիզնեսում և բարելավել դրանք տեխնոլոգիաների միջոցով, ապա մենք կհաջողենք ապագայում: Հարցն այն է, թե որքանով են համաշխարհային առաջնորդներն իմաստուն կանանց տալու առավել մեծ հնարավորություններ՝ առերեսվելու աշխարհի մարտահրավերներին:

Մեր աշխատելաոճն ապագայում նույնպես փոխվելու է: Եթե հետադարձ հայացք ենք նետում Իսահակ Նյուտոնի ժամանակաշրջանին, հավանաբար, ամբողջ աշխարհում հազար մարդ էր բարձրագույն մեխանիկա ուսումնասիրում: Էյնշտեյնի ժամանակաշրջանում նա, հավանաբար, մեկն էր այն տասը հազար գիտնականներից, որոնք ուսումնասիրում էին քվանտային ֆիզիկա: Այսօր քանի՞ հոգի է ամբողջ աշխարհում ներգրավված գիտական հետազոտություններում ու զարգացումներում՝ սկսած առաջատար համալսարանների լաբորատորիաների գիտնականներից մինչև դրանց նկուղներում աշխատող երեխաները: Քանի՞ պոտենցիալ Նյուտոններ ու էյնշտեյններ են դուրս գալու այնտեղից: Եվ ինչքա՞ն է կորցնելու ռիսկը, եթե մենք բացառում ենք բնակչության հիսուն տոկոսը:

Հայաստանում մենք երկար ժամանակ է՝ ընդունել ենք կանանց և տղամարդկանց հավասարապես դիտարկելու կարևորությունը: 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետությունն առաջին պետություններից էր, որը կանանց իրավունք տվեց քվեարկելու և ընտրվելու խորհրդարանում: Այդ ժամանակների առաջին կին դեսպանը Դիանա Աբգարն էր, որը Հայաստանի դեսպանն էր Ճապոնիայում:

Իհարկե, մեր երկիրը նույնպես այսօր դիմակայում է բազում մարտահրավերների, սակայն մենք զարգացնում ենք տեխնոլոգիաները՝ առաջ շարժվելու համար. Հայաստանը 21-րդ դարի սթարթափերից մեկն է: Մեր Advanced Tomorrow նախաձեռնությունը կօգնի զարկ տալ գիտությանն ու տեխնոլոգիաներին և ապահովել ավելի լավ ապագա կանանց և տղամարդկանց համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ. ՀՀ ԿԳՄՍՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պարզաբանումներ և կանոններ

Ամփոփելով արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսուցման շուրջ մեկ ամիսը, անդրադառնալով այս ընթացքում ուսուցիչների, ծնողների, տնօրենների, աշակերտների բարձրացրած տարբեր հարցերին և նպատակ ունենալով հավասարակշռել ուսուցիչների և աշակերտների ծանրաբեռնվածությունը, ամրապնդել երեխաների անձնական տվյալների պաշտպանությունը, մեծացնել սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը, ներկայացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարզաբանումները հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման վերաբերյալ:

Ինչպես կազմակերպել հեռավար ուսուցումը

Հեռավար պայմաններում ուսումնական գործընթացը և դասարանի հետ աշխատանքը չեն կարող կազմակերպվել դեմ առ դեմ աշխատանքի նման՝ 30, 40 րոպեով կամ այլ կերպ՝ առցանց համաժամանակյա դասեր իրականացնելու եղանակով: Այս եղանակը առաջ է բերում ուսուցիչների, աշակերտների, իսկ կրտսեր դասարանների դեպքում՝ նաև ծնողների ֆիզիկական հոգնածություն: Ավելին, գործընթացը դադարում է լինել բովանդակային և արդյունավետ՝ դառնալով առավելապես մեխանիկական:

Առաջարկում ենք առաջնորդվել հետևյալ պարզ կանոններով.

• Ուսուցիչը կարող է պլանավորել իր աշխատանքը ոչ թե օրական, այլ շաբաթական կտրվածքով: Շաբաթվա մեկ օրը՝ սկզբում ուսուցիչը աշակերտներին կարող է տրամադրել շաբաթվա թեմային վերաբերող ուսումնական նյութը, տարբեր հղումներ, լրացուցիչ նյութերի հղումները, դասագրքի համապատասխան նյութը: Ապա հանձնարարել ուսումնասիրել այդ նյութը, դուրս գրել անհասկանալի հատվածները, առաջացած հարցերը և ուղարկել ուսուցչին՝ առավել հասանելի որևէ հարթակով: Սրա համար կարող է տրվել մեկից մի քանի օր՝ կախված շաբաթվա թեմայի ծավալից՝ ըստ ուսուցչի պլանավորման՝ հաշվի առնելով ուսումնական պլանով նախատեսված նյութի ամբողջ ծավալը:

• Այնուհետև ուսուցիչը կարող է նշանակել առցանց միաժամանակյա հանդիպման օր: Այդ հանդիպման ժամանակ կպարզաբանվեն աշակերտների հարցերը, ուսուցիչը կտա սպառիչ պատասխաններ և հանձնարարականներ մինչև շաբաթվա վերջ կատարելու համար:

• Ուսուցիչը կարող է նշանակել հանձնարարությունները ստուգելու համար առցանց համաժամանակյա հանդիպման օր և ժամ: Այդ ժամին խմբային աշխատանքի եղանակով ուսուցիչը կստուգի, թե որքանով են երեխաները յուրացրել թեման: Եթե դասարանում աշակերտների թիվը մեծ է, ուսուցիչը կարող է հանձնարարությունը ստուգելու համար նախատեսված համաժամանակյա հանդիպումը կազմակերպել խմբերով:

Նշված ձևով ուսուցման կազմակերպումը հնարավորություն կտա խնայել ֆիզիկական և տեխնիկական ռեսուրսները, երեխանները և ուսուցիչները ստիպված չեն լինի երկար ժամանակ անցկացնել համակարգչի առջև: Ավելին, համակարգչային սարքավորումներ և ինտերնետային կապ չունենալու պարագայում այս գործընթացը կարող է իրականացվել՝ օգտագործելով հեռուստատեսությամբ հասանելի ուսումնական դասերը, դասագրքերը, այլ հասանելի նյութեր, ուսուցչի հետ կարելի է կապվել հեռախոսով: Բոլոր այն ուսուցիչները, որոնք ունեն հեռավար ուսուցմամբ դասընթացների կազմակերպման և հարթակների օգտագործման փորձ, և եթե նման տեխնիկական հնարավորություն առկա է նաև աշակերտների մոտ, ցանկալի է որպես հեռավար ուսուցման կազմակերպման եղանակ օգտագործել դրանք, օրինակ՝ Մուդլ հարթակի միջոցով հեռավար դասընթացների կազմակերպումը, Իթվինինգում հասանելի գործիքների կիրառությունը, Microsoft Office 365 փաթեթով աշխատանքը և այլն: Բոլոր հարթակների վերաբերյալ խորհրդատվությունը և առցանց աջակցության թեժ գիծը հասանելի են հեռավար ուսուցման համալիր էջում՝ heravar.armedu.am:

Իրականացնե՞լ աշակերտների հաշվառում, թե՞ ոչ

Հեռավար ուսուցման գործընթացին աշակերտի մասնակցության նշումը կարևոր է միայն այն առումով, որ պարզ լինի, թե որ աշակերտները չունեն հնարավորություն մասնակցել գործընթացին, հետևաբար, նրանց համար առաջանալու է այդ նյութը հետագայում լրացնելու կարիք: Առաջարկում ենք խուսափել որևէ այլ նպատակով աշակերտի մասնակցության ամրագրումից: Միևնույն ժամանակ, այն աշակերտները, որոնք տեխնիկապես ունեն հնարավորություն մասնակցելու հեռավար ուսուցման գործընթացին, կարևոր է, որ բաց չթողնեն դասերը՝ հետագայում ստիպված չլինելով լրացնել դրանք:

Ինչպես իրականացնել գնահատումը

Առաջարկում ենք ձեռնպահ մնալ պարտադիր թեմատիկ գրավոր աշխատանքներ իրականացնելու պահանջից, ինչը կրթության կազմակերպման նմանատիպ մեթոդների ժամանակ արդյունավետ չէ և հանգեցնում է լրացուցիչ բարդությունների: Առաջարկում ենք աշակերտների գնահատման ընթացքում հաշվի առնել հեռավար ուսուցման յուրահատկությունները և գնահատումն իրականացնելիս առավելապես առաջնորդվել աշակերտի՝ թեմայի յուրացման մակարդակով: Երկրորդ կիսամյակի, տարեկան գնահատականների ձևավորման, ինչպես նաև գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Ինչպես վարվել այն առարկաների կամ թեմաների պարագայում, որոնց ուսուցումը հնարավոր չէ կազմակերպել հեռավար եղանակով

Այն թեմաները, որոնք ուսուցչի գնահատմամբ հնարավոր չէ արդյունավետ մատուցել առցանց, կարող են չներառվել հեռավար ուսուցման գործընթացում, դրանք հարկավոր է հաշվառվել հետագայում լրացնելու համար: Առաջարկում ենք նաև նշված թեմաների և առարկաների ուսուցումը հեռավար եղանակով կազմակերպել հնարավորինս իրավիճակին համարժեք, օրինակ՝ ֆիզկուլտուրա առարկայի ուսուցումը առավելապես ուղղորդել դեպի տան պայմաններում կատարման համար հնարավոր վարժությունների ներկայացումը, աշակերտների՝ արտակարգ դրության պայմաններում առողջ ապրելակերպի կազմակերպումը և այլն: Բացի այդ, հորդորում ենք զերծ մնալ երեխաների՝ տարբեր գործողությունների և վարժությունների իրականացման տեսանկարահանումների և դրանք ուսուցչին ուղարկելու պահանջներից:

Էլեկտրոնային մատյանի լրացման անհրաժեշտությունը

Էլեկտրոնային մատյանի լրացման նպատակը հեռավար ուսուցման ծավալների ու ըստ այդմ դասերի լրացման անհրաժեշտության գնահատումն է, ոչ թե ուսուցիչների վերահսկողությունը: Էլեկտրոնային մատյանը հեռավար ուսուցման գործընթացում ներդրվել է նաև որպես ուսուցիչների համար կարևոր աշխատանքային գործիք, որտեղ կգրանցվեն արված դասերն ու տրված հանձնարարությունները: Հետագայում այս շրջանի համար էլեկտրոնային մատյանում արված գրանցումները թղթային մատյաններ փոխանցելու կարիք չի լինելու: Էլեկտրոնային մատյանի վրա այս շրջանում ուսուցիչների կատարած աշխատանքը կօգնի կատարելագործել համակարգը՝ հետագայում ամբողջությամբ անցնելով դրան և աստիճանաբար հրաժարվելով թղթային մատյանները լրացնելուց:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ օրագրից

ԱՊՐԻԼ 1990Թ.

Պատմական 88-ի փետրվարյան պոռթկումից անցել է ավելի քան երկու տարի, ասել է թե՝ երրորդ տարին է, ինչ մենք՝ արցախահայերս, փոթորկալից վիճակում ենք և ամեն ինչի դիմում ենք մեր Հարցը դրականորեն լուծելու: Բայց չգիտենք ինչու, Մոսկվան որոշումը որոշման հետևից է ընդունում, այն էլ՝ կիսատ-պռատ, Ադրբեջան կոչեցյալի օգտին, նրա ճնշման տակ, նրա կողմից ուժի գործադրման տակ: Իսկ մենք նորանոր կարգախոսներով արդեն տներում նստած՝ դեմոկրատական հիմունքներով ենք պահանջում մեր Հարցի լուծումը: 1990-ը «սև»-ով մտավ Արցախ աշխարհ, առանձնապես Հին Նոր տարին, որի ժամանակ հայի արյունով ներկվեցին Բաքվի փողոցները: Բաքու, որ հայի ձեռքերով է մշակվել, հղկվել ու Բաքու դարձել:

Այսօր ապրիլ ամիսն է, 1990-ի ապրիլը, գարնան ամենագեղեցիկ ամիսը: Բնության օրինաչափ կարգով բնությունը զարթոնք է ապրում, բուսական աշխարհը ծլում, ծաղկում է, մեր քաղաքին հեքիաթային տեսք տալիս, բայց կանաչազարդ, ծաղկազարդ փողոցներում թե՛ օրը ցերեկով և թե՛ գիշերը հազվադեպ կհանդիպեք մարդուն՝ աշխարհի զարդին, քանի որ սաֆոնովյան տխրահռչակ ռեժիմ է, ավելի ճիշտ՝ պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմ: Չգիտեմ այս ծախված ռուս-կոչեցյալներին ինչպես են գտել և հասցրել մեր աշխարհը: Զինվորական կոչումով իբր գեներալ-մայոր է, բայց կարծես ուղեղը հանած ռոբոտ է. առանց մտածելու կատարում է այն, ինչ որ թունավոր հոգու տեր հայատյաց Պոլյանիչկոն է թելադրում: Պոլյանիչկո, որ գազանային մկրտությունը ստացել է Աֆղանստանում, երբ գտնվելով այնտեղ, երկրի վարչապետի՝ Նաջիկուլայի ավագ խորհրդատուն էր, և այսօր այս մարդուկը կազմկոմիտեի նախագահ լինելով՝ սպառնալիքների աքցանի մեջ է առել մեզ՝ արցախահայերիս՝ չգիտակցելով, որ ղարաբաղցի հայը մարդու առանձնահատուկ տեսակ է, նրա համառությանը սահման չկա, որոշել է հասնել իր ապրելու իրավունքին, իր ազատությանը: Եվ ինչ էլ որ լինի, հասնելու է: Պայքարելու է մինչև վերջ, այն էլ բացահայտ կերպով, արար-աշխարհին իրազեկելով:

1.04.1990թ.: Օրը կիրակի է: Որպեսզի չարթնացնեմ աղջիկներիս ու նրանց մորը, դուռը կամացուկ բացելով դուրս եմ գալիս բակ, լիաթոք շնչում այգուս բազմատեսակ ծառերի ծաղիկներից արձակված անուշ հոտը և սկսում փխրեցնել դեռ ծաղիկները չբացված խնձորենիների բների շուրջը: Քար լռություն է, որը խախտվում է թռչունների, ավելի ճիշտ, ծիտիկների ծլվլոցով, մեկ էլ մեր՝ Կնունյանցների փողոցով անցնող պարեկների խրոխտ քայլերի ձայներից: Քանի որ այս զինվորները պատուհանիս մոտով են անցնում, նրանց քայլերի ձայներից արթնանում են նաև երեխաներս: Թամարաս մի բաժակ թեյ է բերում, և ես, փխրեցումը թողնելով, նստում եմ բակում դրված մահճակալին, օգտվում թեյից և սպասում օրվա փոստին: Բայց այդպես էլ այդ օրը ոչ մի թերթ չստացա: Ռադիոն ու հեռուստացույցն էլ չեն գործում. Պոլյանիչկո-Սաֆոնով երկյակին կուլ են գնացել:

2.04.1990թ.: Չգիտեմ ինչու, դպրոց գնալիս հրապարակին հասնելով, ինձնից անկախ շրջվում եմ ձախ, մտնում դատարկ հրապարակը, մոտենում մարզխորհրդի շենքին և այնտեղից էլ կուսքաղկոմի շենքի մոտով բարձրանում դեպի դպրոց (թիվ 9 միջնակարգ դպրոցը): Մեռելային լռություն է: Նայում եմ կուսմարզկոմի և մարզխորհրդի շենքերի վրա ծածանվող՝ արդեն մեզ համար խորթ Ադրբեջանի պետական դրոշին և վրդովված քթիս տակ մրմնջում.

«Ախ, երանի ներսս գտնվի մի ուժ,
Գտնվի մի ուժ՝ բուն դրած,
Այս դրոշներին նայելուց իսկույն
Վառվեն, մոխիր դարձած՝ ընկնեն ցած»:

Լավ է, որ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի շենքի վրա ծածանվում է Հայաստանի պետական դրոշը, և այդ դրոշի տակ աշխատում են և՛ մարզկոմի նախկին, և՛ քաղկոմի աշխատակիցները, և՛ ժողդեպուտատների մարզխորհրդի օրերս վերսկսված գործկոմը: Այս շենքում է տեղավորված նաև մեր Շարժման շտաբը: Հանդիպում եմ շտաբի անդամ Վլադիկ Սարգսյանին, որից իմանում եմ, որ նախապատրաստական աշխատանք է տարվում Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցը կազմակերպված նշելու, և այդ ուղղությամբ դպրոցներն էլ պետք է աշխատեն:

Սրտիս խորքում վիրավորվում եմ, երբ ԽՍՀՄ-ը կայսրություն է անվանվում՝ համոզված լինելով, որ կայսրությունը վերջ ունի, մահ ունի, այնպես, ինչպես մինչև հիմա եղած բոլոր կայսրությունները՝ թե՛ հռոմեական, թե՛ ավստրոհունգարական, թե՛ գերմանական, և թե՛ Օսմանյան: Բայց համամիտ եմ Հայ այն մեկնաբանների հետ, որ «...կայսրության գոյատևման նպատակին հասնելու համար Կենտրոնը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի: Քաղաքական իրադրությունը ռեգիոնում, որի փուլերը կարելի է որոշել այն դրոշակի գույնով, որը փոխնիփոխ բարձրացվում է Ստեփանակերտի մարզգործկոմի շենքի վրա»: Ես դրան կավելացնեի նաև՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի օրգանափոխությամբ, որի մասին գրել եմ նախկինում:

Որպես պատմության ուսուցիչ՝ նաև աշակերտներիս գիտակցությանն եմ հասցնում, որ մարզգործկոմի շենքի վրա Ադրբեջանի պետական դրոշը, իսկ կուսակցության Ստեփքաղկոմի շենքի վրա՝ Հայաստանի պետական դրոշը հիշեցնում են 1917թ. փետրվարյան հեղափոխության արդյունքը, ըստ որի՝ Ձմեռային պալատի վրա բուրժուական ժամանակավոր կառավարության դրոշն էր ծածանվում, իսկ Սմոլնիի վրա՝ Սովետների դրոշը, ասել է թե՝ այսօր մեզ մոտ էլ է երկիշխանության նման մի իրադրություն՝ Պոլյանիչկո-Սաֆոնովյան իշխանություն և մեր մարզխորհրդի ու Շարժման շտաբի իշխանություն:

3.04.1990թ.: Լուր ստացա, որ Երևանում տեղի է ունեցել Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի ընդլայնված պլենում, որը քննարկել է «ՀԼԿԵՄ պլատֆորմը ՀամԼԿԵՄ 21-րդ համագումարում» հարցը:

8.04.1990թ.: Իմ ստանալիս թերթ-ամսագրերին ավելացավ ևս մեկը՝ Հայոց համազգային շարժման պաշտոնաթերթ «Հայք» շաբաթաթերթը, որի թիվ 9-10-ում ընթերցում եմ. «Արցախի փոխարքա Սաֆոնովն ամեն ինչի դիմում է՝ վիժեցնելու համար Արևելյան Հայաստանի այս հատվածում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: (Նշեմ, որ մենք մեծ ուրախությամբ ու հույսերով ենք նախապատրաստվում մասնակցելու այդ ընտրություններին): Նա թույլ չի տալիս կազմել օկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժողովներ՝ սպառնալով ձերբակալել դրանց անդամներին: Արցախցիները, սակայն, տրամադրված են Միացյալ հանրապետության պառլամենտի որոշումներն իրականացնելու վճռականությամբ: («Հայք» լուրերի պատասխանատու Ե. Աբգարյան):

Այնուհետև «Հայք» շաբաթաթերթը գրում է. «Չհավատալ Մոսկվային. նա մեր հարցը դրական չի լուծելու, նա մեր գերված հողերից ոչ մի միլիմետր չի տալու, ոչ մի ազգ, ոչ մի այլ պետություն մեզ չի օգնելու: Արցախի արդեն մեր ուժերով կայացած վերամիավորումն էլ Հայաստանի հետ եթե կարողանանք պահպանել առաջիկայում, ապա դարձյալ ու դարձյալ դա կարող է լինել միայն մեր հայկական ուժերով, նաև մեր դիվանագիտությամբ: («Հայք», 8-ին ապրիլի, 1990թ., շաբաթաթերթը կցված է օրագրիս):

11.04.1990թ.: «Ավանգարդ»-ի այսօրվա համարում տպագրված է Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի ապրիլի 3-ի ընդլայնված նիստի (ավելի ճիշտ՝ պլենումի) որոշումը, որից առանձնացրել եմ ներքոհիշյալ դրույթները.

ա) «...Մենք միութենական հանրապետությունների ինքնիշխանության, ազգային ինքնավարությունների բոլոր տեսակների և նրանց հասարակական-քաղաքական կառուցվածքների, ինքնուրույնության, ազգերի ինքնորոշման իրավունքների իրացման մեխանիզմի ստեղծման կողմնակից ենք:

բ) ՀամԼԿԵՄ անունը չի համապատասխանում նրա նպատակներին, և անհրաժեշտ է քննարկել ՀամԼԿԵՄ վերանվանման հարցը: Առաջարկվում է այդ կազմակերպությանը տալ կոնֆեդերացիոն կարգավիճակ և այլն...

Ուրախ եմ, որ Հայաստանի կոմերիտմիության ԿԿ առաջին քարտուղարի շուրթերից լսեցի, որ մեր մարզի կոմերիտկազմակերպությունը համարվում է ՀԼԿԵՄ անբաժան մաս և ամեն ինչով օգնում է նրա գործունեությանը, ուրախ եմ նաև, որ մեր պիոներ-դպրոցականների և կոմերիտականների համար կազմակերպվում են հանգստի ճամբարներ, դպրոցական գրադարաններին ուղարկվում են հայալեզու գրականություն և դասագրքեր:

12-16.04.1990թ.: Դրությունը լարված է թե՛ Արցախ աշխարհում և թե՛ ամբողջ ռեգիոնում, որից օգտվում են սադրիչ խմբերը: Ահա մի օրինակ մեր մարզից դուրս. 16.04.1990թ.: Նախիջևանի Սադարակ գյուղից երկու զրահապատ մեքենաներով Քյարքի են մտել ՌԽՖՍՀ մեկ դեպուտատ, քյարքեցի մի նախկին ադրբեջանցի, ներքին զորքերի սպաներ և զինվորներ: Նրանք Քյարքի են մտել առանց տեղյակ պահելու տվյալ շրջանում տեղակայված խորհրդային բանակի հրամանատարությանը: Նրանք լուսանկարել են գյուղի անվնաս գերեզմանատունը, ահաբեկել են գյուղացիներին՝ նրանց անվանելով դաշնակ թափթփուկներ: Շուտով ժամանել է տեղի բանակային կարգախումբը, հետաքրքրվել այցելության նպատակներով և այն հարցով, թե ովքեր են նրանց ուղարկել:

«Հյուրերը» այդ հարցին չեն պատասխանել: Նրանք նստել են իրենց զրահապատ մեքենաները՝ ջարդելով մի «ԿամԱԶ» ավտոմեքենա: Սկսել են հեռանալ: Բանակայինները իրենց զրահամեքենայից կրակել և վնասել են գյուղ ներխուժած զրահամեքենաներից մեկին: Ներխուժողները ի վերջո մյուս զրահամեքենայով փախել են: Հետաքրքիր է, որ ըստ ստույգ լուրերի, այդ ներխուժման մասին տեղյակ չէր նույնիսկ ադրբեջանական կողմում տեղակայված զորամասի հրամանատարությունը («Հայք»-ում գրում է լուրերի պատասխանատու Երջանիկ Աբգարյանը):

17.04.1990թ.: Մեզ մոտ չնայած դաժան ռեժիմին, լուրջ աշխատանք է տարվում, որ Հայկական ԽՍՀ ժողպատգամավորների առաջիկա ընտրություններում ԼՂԻՄ-ի թեկնածուներն առաջադրվեն արժանավորները, իսկ Ադրբեջանն ամեն ինչի դիմում է, որ արգելի արցախյան պատգամավորների ընտրությունը: Իսկ Սուբոնովն ուժեղացրել է շուրջկալներն ու ձերբակալությունները:

18.04.1990թ.: Օրագրիս կցված է «Երեկոյան Երևան» թերթում տպագրված «Բարության նահանգապետը-Ջորջ Դոքմեջյան» վերտառությամբ Գեղամ Ավետիսյանի հոդվածը: Ուրախությամբ ու հպարտությամբ եմ լցվում՝ ընթերցելով. «Ութ տարուց ավելի է, ինչ Կալիֆոռնիայի նահանգապետ է աշխատում հայազգի Ջորջ (Գևորգ) Դոքմեջյանը (Թուքմեջյան), որը վաստակել է բարության նահանգապետի պատվավոր անունը: Այդ հոդվածից ընթերցողին եմ ներկայացնում մի պարբերություն. «...Այժմ, ուստի ես՝ Ջորջ Դոքմեջյանս՝ Կալիֆոռնիայի նահանգի նահանգապետս, համաձայն նահանգի օրենսդրական մարմնի հ. 51 բանաձևի (1981թ.), այստեղ իրապես հռչակում եմ 1990 թվականի ապրիլի 24-ը Հիշատակի պետական օր՝ ի ճանաչումն հայերի Ցեղասպանության 75-րդ տարելիցի: Ի հիշատակ այս ողբերգության անմեղ զոհերի, ես պարտադրելով խնդրում եմ համայն աշխարհի մարդկությանը միանալ այս հարգանքի ծեսին:

Ի վկայություն դրա, ես այստեղ դնում եմ ձեռքս և ամրացնում Կալիֆոռնիայի նահանգի Մեծ կրծքանշանը և հաստատում:

1990 թվականի ապրիլի 18-ին
Ջորջ Դոքմեջյան
Կալիֆոռնիայի նահանգապետ»:

Սա ինձ համար գտածո էր, և հպարտությամբ պրոպագանդում եմ՝ ուր պատահի:

19-23.04.1990թ.: Սաֆոնովականները կարծես հոտն առել են և ավելի են ուժեղացրել հսկողությունը, որ արցախահայերս չնշենք Ցեղասպանության օրը: Իսկ մենք, հակառակ դրա, առանց վախենալու սպասում ենք այդ օրվան. չէ՞ որ մեր պատմության մեջ առաջին անգամն է, որ համարձակվել ենք նշելու այդ անմեղ զոհերի հիշատակը:

24.04.1990թ.: Դեպի եղբայրական գերեզմանատան հուշահամալիր տանող փողոցով անցնելու տեղ չկա: Մեր դպրոցի տնօրեն ընկեր Սահակյանի գլխավորությամբ հուշահամալիրում ենք: Լսեցինք Համլետ Գրիգորյանին, որը, բացելով Ցեղասպանության 75-րդ տարելիցին նվիրված միտինգը, խոսքը տվեց Գուրգեն Գաբրիելյանին: Այնուհետև ելույթ ունեցան Արկադի Թովմասյանը, Հրաչյա Բեգլարյանը, Սոկրատ Խանյանը և ուրիշներ, իսկ հավաքի շուրջը վխտում էին սաֆոնովականները:

25.04.1990թ.: Լուր տարածվեց, թե սգո հավաքում ելույթ ունեցողներին կանչել են զինվորական պարետատուն և մեղադրել արտակարգ դրությունը խախտելու մեջ:

26.04.1990թ.: Դրությունը քանի գնում, ավելի է սրվում: Ձերբակալվել են ապրիլի 24-ի հավաքը կազմակերպողները: Լենինի անվան հրապարակը դարձյալ մարդաշատ է, որոնք պահանջում են ազատ արձակել ձերբակալվածներին, սակայն ոչ մի պատասխան: Այլ ընդհակառակը, Սաֆոնովի հրամանով սկսվեց ուժի գործադրումը՝ օգտագործելով ռետինե մահակներ և հրազեն, ինչի արդյունքում եղան վիրավորներ: Ձերբակալվածների մի մասին տուգանելով 1000-ական ռուբլի՝ բաց թողեցին, իսկ մի մասին էլ 15 օրով կալանավորեցին՝ փոխադրելով Պյատիգորսկի «Белый лебедь» բանտը: Տնային կալանքի ենթարկվեցին 30 ակտիվիստներ, որոնց թվում՝ Ռոբերտ Քոչարյանը, Արկադի Ղուկասյանը, Էդուարդ Ղազարյանը, Արմո Ծատուրյանը, Էռնեստ Հայրապետյանը, Արզիկ Մխիթարյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Համլետ Մովսիսյանը և ուրիշներ: Պարետության վայրագությունների մասին բողոք-դիմում հղվեց Մոսկվա:

29.04.1990թ.: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում լսվեց «Հայկական ԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում ստեղծված իրադրության և այն կարգավորելու խնդիրների մասին» հարցը, որի կապակցությամբ հանդես եկան Հայկական ԽՍՀ ՆԳ մինիստրի տեղակալ Գրիգորյանը և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողդեպուտատ Ջորի Բալայանը: Նստաշրջանը հատուկ նշեց, որ Ադր.ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ապօրինի որոշում է ընդունել ԼՂԻՄ վարչատարածքային կազմը փոփոխելու մասին: Ժողովրդագրական հաշվեկշիռը խախտելու միտումով շտապ միջոցառումներ են ձեռնարկվում, ձերբակալվում են անմեղ մարդիկ, հրահրվում են հայ ազգաբնակչության և զինծառայողների ընդհարումներ, բորբոքվում է ազգամիջյան ընդհարումների կրակը և այլն:

30.04.1990թ.: Նախատոնական օր է, բայց մեր քաղաքը լարված վիճակում է: Պարետային կարգը շարունակվում է...

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
անհատական թոշակառու

ՔԱՋՈՐԴԻՆԵՐ

ՍԱՐԻ ԱՐՋԵՐ

(Բորիկ Բաղդասարյան)

Չգիտեմ ով ինչպես, բայց գյումրեցիներս հատուկ աղոթքով ենք քուն մտնում.

- Բարի գիշեր, Սարի Արջեր, կրակ վառեք՝ չմրսիք,

Բարի գիշեր, Սարի Արջեր, Աստված ձեզի պահապան:

Այսպես՝ տղամարդկային, Հայրաքաղաքին հատուկ:

Զիլ անեկդոտըմ պատմեմ: Հայը այլմոլորակայինին քարտեզ կբացատրե: Քարտեզը սաղ կանաչ գույնով է ներկված:

- Ըսիկ կտեսնի՞ս, առաջ Հյուսիսային Ամերիկա էր, հըմի Հայաստան է, էս էլ Հարավային Ամերիկա էր, հըմի Հայաստան է:

Ըսպես սաղ երկրների առաջվա անունը կուտա ու վերջում էլ՝ հըմի Հայաստան է:

- Հըբը էս փոքր կարմիր կետը ի՞նչ է,-կհարցնե այլմոլորակայինը:

- Ըդիկ Ղարաբաղն է, ապ ջան, ըդպես էլ հեչ մեկին չհանձնվավ:

- Հա՞, շատ ա լավը, Վաղո՛ ջան, հարյո՛ւր տոկոս:

Ուրախանում են տղաները:

- Հըբը՛, Մոսո ջան, ըդպես էլ բդի էղնի:

Արցախյան աշխարհիս լեռները ձգվում են բա՜րձր-բա՜րձր՝ ամպերից վեր: Նայում եմ. ինձանից ներքև լեռների գագաթներն են երևում միայն: Ասես գդակ-վրաններ լինեն: Լեռնալանջերը, անտառներն ու բնակավայրերը չեն երևում: Նրանք ծածկված են ամպե օվկիանոսով. ճերմա՜կ-ճերմա՜կ… Ես երկնքի լազուրում եմ: Այստե՛ղ է, որ Տեր ես զգում քեզ, այստե՛ղ է, որ լեռնանում է հոգիդ և լցվում ու ալեծփում է հազար ու մի հույզերով: Իմ պապենակա՛ն երկիր: Երբ ամպե օվկիանը մտափոխվի, մի տեղ բարեբեր անձրև դառնա, մի տեղ կարկտածեծ անի, մի տեղ ծաղկաթերթեր թափի բռունցքաչափ փաթիլների տեսքով, ի՞նչ կա որ, ադպես էլ է լինում, որպես սիրահարության նշան՝ երկիրը նորից կերևա իր բյուր հմայքներով:

Ինձ դարձյալ կտխրեցնեն փորփրված սարալանջերը, որ ամենուր վերածվել են դիրքերի:

Նոր բացված ապրիլյան գարուն. ծաղկոտ ու սառը, քամիներով արև, որ համարյա չի էլ տաքացնում: Ամպերի ճերմակ քուլաների քողի տակ գալիս է թուրքը՝ սպիտակ սավաններով քողարկված:

- Սողունն՛ե՛ր, ո՞ւր եք գալիս: Մենք ձեզ հող չունենք տալու:

X հենակետի տղաներն են: Ութն են, տասնութից քսան տարեկան՝ քսաներեքամյա Վաղինակ Ղազարյանի հրամանատարությամբ: Նրանք են, որ կողքի Z դիրքի նույն տարիքի ժամկետային զինծառայող ինը քաջերի հետ ավագ լեյտենանտ Մերուժան Ստեփանյանի հրամանատարությամբ մեծ դիմադրությամբ կասեցրին թշնամու լայնածավալ հարձակումը, չհանձնվեցին և հերոսացան…

- Մեծ քույրս՝ Արևիկ, փոքրը՝ Լուսինե: Մենք աստղեր ենք նրանց մեջ:

- Մենք չորս եղբայրներ ենք՝ Եղիշե, Բորիկ, Արսեն, Դավիթ. Պաշտպանության գնդի սպա Նաիրիի և Նորայի զավակները:

- Դուք էլ եք արևներ,- ասում եմ,- ոչ միայն ձեր ծնողների, այլ նաև բոլորիս համար: Դեմքիդ սպին ինչի՞ց է:

- Քերծվածք է, պատերազմից… երկար ժամանակ մնաց, բայց էլ չի երևում, անցել է:

Անցել է: Դեմքի սպի է, կանցնի: Իսկ հոգի՞ն, երբ սպիներով է պատված, կանցնի՞: Չէ՛, չի անցնի: Եվ ինչպե՞ս անցնի, երբ ամեն օր այն թարմացվում է, երբ սահմանին իրավիճակը չի հանդարտվում, ու ամեն վայրկյան, ամեն վայրկյան… Աստված մի արասցե… Նայում եմ Բորիկին. բարետես ու փխրուն արտաքինին, բայց աչքե՞րը… պայքարող, չնահանջող, հաղթելու վճռականությամբ, արծվային: Ինչպես մեր բոլոր զինվորների աչքերն են: Մե՛ր զինվորների՝ Սարի Արջերի:

Ահավոր բացահայտումն ավելի խստացրեց հոգու ցավն ու դառնությունը. այն, որ Քառօրյան դավաճան ու դավադիրների հերթական խաղերից է: Խաղ, որ հարյուր տասից ավելի տասնութից քսան տարեկան պատանիների կյանք արժեցավ, ութ հարյուր հեկտար կարևորագույն տարածք նվիրվեց թշնամուն… Ցավո՛տ բացահայտում:

- Ի՞նչ եք վայնասուն դրել:

Լայնածավալ հարձակում է, բա ի՞նչ եք ուզում: Մի երեսուն զոհ ենք տվել, երկուսից երեք մետր էլ հող: Մերն էլ չէ, չեզոք գոտի է:

Հեռուստացույցով ամբարտավան հայտարարություն է անում նա, ով թվում է՝ ամենից շատ էր մտահոգվելու ստեղծված իրավիճակով:

Չէ՛, չեմ հավատում, անհնա՛ր է: Հայը չի՛ կարող այսքան անհայ լինել, զինվորին թողնել անզեն ու անհաց: Դրանք ծախու շներ են՝ նախապես պատրաստված, ամեն մի քայլը ծրագրված հայի ազգանվամբ: Նրանց գեները ստուգել է պետք: Իմ իմացած հայը իր հացի վերջին պատառը զինվորին տվող է, ընկերոջ կյանքը սեփական կրծքով պաշտպանող է, իմ իմացած հայը հա՛յ է, որ չի դողում սեփական մաշկի համար և զինվորի արյամբ հարստություն չի դիզում:

Բոլորն էին համոզված, որ եթե հարձակում լինի, մեկ շաբաթ առաջ ականապատված դաշտով ոչ մի տանկ չի կարող անվնաս անցնել: Բայց թշնամու տանկերը գալիս էին, ու նրանցից ոչ մեկը չէր վնասվում: Այս ի՞նչ հանելուկ է: Ականնե՞րն էին կեղծ, թե՞…

- Տղե՛րք, դուք էլ նույնը կմտածե՞ք: Էս կարո՞ղ է Դեյվիդ Կոպերֆիլդը թուրքերի կողմն է անցել,- այդ լարված պահին կատակելը չի մոռանում Վաղոն:

- Դուխներդ չգցե՛ք, մենք էլ կրնանք ընպես ֆոկուզ էնենք, օր սաղ զարմանան: Ուշադիր ընձի լսեք. կկռվինք սառնասիրտ, զինամթերքը խնայելով, պետք էղնի՝ մինչև վերջ: Բայց դուխներդ չգցե՛ք, դուխովին գնդակը չի կըպնի: Մենք հող չունենք տալու: Բըդի հաղթենք, ու ամեն մեկս մեր տներով էրթանք:

Հետո Բորիկ Բաղդասարյանը էջելու էր այդ օրերը...

«Երեք եղբայրներս էլ ծառայել ենք Մատաղիսում. Թալիշի գումարտակում: Իրար ենք հաջորդել: Վեց տարի մորս աչքերը Թալիշի ճամփեքին է մնացել: Չորս ամսվա մարտական հերթափոխության զինվոր էի, երբ սկսվեց Ապրիլյան պատերազմը: Մինչև այդ երեք անգամ եղել եմ հենակետում: Ապրիլի 1-ին բարձրացա չորրորդ հերթափոխի… ժամը 11.30-ին իմացանք, որ գումարտակի հարևան վաշտի տղաներից մեկին հերթափոխի ճանապարհին թուրքերը խփել են: Սերժանտ էր, դիրքի ավագ, արտակարգ անձնավորություն, կենսուրախ, ընկերասեր: Այդ պահից մոտս եղերական տրամադրություն էր, բոլորս էինք անտրամադիր: Զորամասում սուգ էր: Երեկոյան ժամը 21-ից 23-ը դիրքապահ էի, 23.00-ից 00.00՝ արթուն պահակ, 00-ից ժամը 01-00՝ կապավոր: Կես ժամ դեռ չէի հանգստացել՝ գետնատնակում անասելի իրարանցում սկսվեց. գոռոցներ, զենքի ձայներ:

- Ելե՛ք, տղե՛րք, դիվերսիա է, շո՛ւտ արեք: Էս ինչքա՜ն շատ են՝ տասներեք, տասնվեց, հիսունն անց, բայց էլի թիվն ավելանում է:

Դիրքում ութ հոգի էինք, մեր դիմաց՝ վաթսունից ավելի հատուկ պատրաստված մինչև ատամները զինված թուրքեր:

Հա, ասեմ, որ մեր և հարևան դիրքերում մարտ ամսին գիշերային տեսանելիության սարքեր էին տեղադրել, որ 360 աստիճանով ցույց էին տալիս տեղանքը: Եվ դա էլ մեծ դեր ունեցավ մեր փրկության համար: Ամբողջ անձնակազմով բարձրացանք դիրքեր: Սկսվեց կրակոցների տարափ: Հազարավոր արկեր ու ականներ թափվեցին դիրքերի վրա: Խավար գիշեր էր, լուսին չկար: Մեզանից մեկը մնաց գետնատնակում: Նա տեսանելիության սարքի միջոցով մեզ ուղղություն էր տալիս, թե որ կողմը կրակենք: Մինչև առավոտ այդպես պահեցինք դիրքը: Լույսը բացվելուց հետո նոր տեսնում էինք թշնամուն և ճշգրիտ ուղղությամբ էինք վարում մարտը: Վերադասին միշտ տեղեկացնում էինք կռվի ընթացքի մասին, բայց ոչ մի արձագանք… Հարևան դիրքը թուրքերն արդեն գրավել էին: Այնտեղից էին կրակում մեզ վրա: Ամեն ուղղությամբ հարձակում էր: Հրետանակոծությունը չէր դադարում: Երեկոյան, երբ մեր ռազմամթերքը վերջանում էր, մեր դիրքի ավագը կապվեց դասակի հրամանատարի հետ.

- Փամփուշտները վերջանում են: Մարտ վարելն անհնար է դառնում: Չենք կարող դիրքը պահել:

- Ուր որ է՝ օգնությունը տեղ կհասնի,-հանգստացնում էին մեզ:

Իսկ օգնությունն այդպես էլ տեղ չհասավ: Խնայելով էինք կրակում:

Երեկոյան ժամը 7-ին գումարտակից մի ուրիշ սպա զանգեց մեր դիրքի ավագին.

- Վաղո՛ ջան, անձնակազմդ հանի՛, թե չէ գալու են մորթեն-խոշտանգեն: Ռազմամթերք էլ չունեք: էլ ինչպե՞ս եք կռվելու:

Հնչեց «Նահանջ» հրամանը: Մենք ետ քաշվեցինք հարևան դիրք՝ մեր հենակետը կրկին վերցնելու վճռականությամբ:

Առավոտյան «Եղնիկներ» զորամասի օգնությամբ ետ վերցրինք մեր և կողքի դիրքերը:

Մեր անձնակազմից երկու վիրավոր ունեցանք: 170 դիրքից՝ չորս զոհ: Մեր լավ ընկերներն էին՝ Աղասին, Ռաֆիկը, Վիկտորը, Մերուժանը: Հայկ Թորոյանին, Հրանտ Ղարիբյանին զինամթերք տեղափոխելու ժամանակ դարանակալեցին, շրջափակեցին… գլխատեցին…

Այ, ներսումս ամեն ինչ փշրվեց նորից:

Աչքերս իբրև հմուտ նկարիչ՝ Ամբողջ մի աշխարհ լուռ նկարեցին Սրտիս կտավին… Գունեղ ներկերով անդաստան դարձրին Կյանքս ու հոգիս… Կարոտս բախվեց քո քար կարոտին, Գուցե կարոտդ մոռացե՞լ է ինձ…

Թշնամին 150-ից ավելի դիակներ թողեց ու նահանջեց: Նորից վճռականությամբ լցվեցի ու պայքարեցի ապրելու, ընտանիքիս գիրկը վերադառնալու համար»:

Այո, պետք է, որ մահը հապաղեր, երկմտեր և չդիպչեր այս տողերի հեղինակին: Պետք է որ հարազատների աղոթքներով և Աստծո զորությամբ խնայվեր բազմաշնորհ երիտասարդ Բորիկ Բաղդասարյանի կյանքը: Պատերազմական ահավոր օրերից հետո նա պետք է շարունակեր ուսումը Արցախի պետական համալսարանի քաղաքագիտության բաժնում, կրկին պետք է հիացներ մեզ իր ակորդեոնի հրաշալի երաժշտությամբ, իր վրձնած նկարներով և բանաստեղծեր ապրումներն իր՝ հուզառատ և սիրով լեցուն:

«Տանեցիներին լուր էին տվել, իբր ինձ վիրավոր գերի են վերցրել ու ճամփի կեսից գլխիս են կրակել: Մեզ մոտ՝ Մարտունիում, ինձ ողջողջ թաղել էին…

Ամսի 3-ին նոր զանգեցի տուն: Հեռախոսի մեջ կես ժամ միայն արցունքի հեծկլտոցի ձայներ էին…»:

Այս օրերին 170 և 171 դիրքերում, կատաղի հրետակոծության տակ, խնայելով զենքն ու զինամթերքը, մեր տղաները հզոր դիմադրություն ցույց տվին: Նրանք վստահ ու հանգիստ ետ մղեցին թշնամուն, մինչև որ մեր զորքերը ժամանակ ունեցան կազմավորվելու, ազատագրելու Թալիշը և ետ մղելու թշնամուն՝ նրան պատճառելով մարդկային մեծ կորուստներ:

Իսկ երբ բեկորային վնասվածքներ ստացած Մովսեսն ու Վաղինակը հիվանդանոց էին տեղափոխվում, արդեն ուրախությունը, հաղթանակի՛ ուրախությունը բարձրացել ու փորձում էր ուշադրություն գրավել:

- Մոսո՛, ճիշտ կըսեմ, վերջում սաղ աշխարհը մեկ գույնով բըդի ներկվի ու Հայաստան դառնա: Էն ժամանակ մեզի էլ Սարի Արջեր չեն ըսե, Աշխարհի Եղնիկներ կըսեն երևի՛:

Հրանուշ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Շնորհավորանք

ՄԻՇՏ ԳԱՐՆԱՆ ՊԵՍ ԺՊՏՈՒՆ…

«Թշվառ է այն ազգը, ով չի մեծարում և ապավինում ուսուցչին»:
Ղ. Աղայան

Ինչպե՞ս չխոսենք Անահիտ Մեսրոպյանի՝ մեր հոբելյարի մասին, որն այսքան տարիներ իրեն նվիրել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Տարիներ առաջ էր. ջահել, ավյունով լեցուն, տակավին երիտասարդ, մի քիչ էլ վախվորած՝ նա ոտք դրեց հ. 2 դպրոցի շեմին և առայսօր աշխատում է այստեղ, չնայած ներկայումս Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի հիմնական աշխատող է: Նա իր կյանքն առանց դպրոցի, առանց աշակերտների չի պատկերացնում: Այսքան տարիներ բազմաթիվ մատաղ հոգիներ է կրթել ու դաստիարակել, բայց ժամանակն ասես նրա կողքով է անցել. նույն ժպտուն աչքերն ու անկեղծ հոգին է…

Գործունեության տարիներին նա իր անսպառ եռանդով զարմացրել է բոլորին: Երբ հարկավոր է եղել, քնքուշ մայր է դարձել, իսկ հարկ եղած դեպքում՝ խիստ ու անկոտրում է մնացել: Անահիտ Մեսրոպյանն իրեն առանց աշակերտների չի պատկերացնում, քանզի նրա սրտի երակները սնվում են աշակերտների ձայնով: Տարբեր սերունդների նրա հետ կապվածության մասին է վկայում ամեն տարի նրանց հանդիպումներն իրենց դասղեկ-ուսուցչի հետ: Նա շատ յուրահատուկ կազմակերպչական ձիրք ունի: Բազմաթիվ տարաբնույթ միջոցառումների հեղինակ է: Միջոցառումների մասնակիցները հիացած ու տպավորված են մնում: Անահիտ Մեսրոպյանն օժտված է մարդկային լավագույն որակներով՝ լավ մայր է, լավ դուստր և քույր, լավ հարևան, լավ բարեկամ, լավ ընկեր, լավ…

Ուստի մեր լավ գործընկերոջը՝ ծննդյան օրվա առթիվ մաղթում ենք առողջություն, երկար տարիների կյանք: Թող նրա արևաշող դեմքին երբեք չիջնի հոգսի ոչ մի ցող:

Գարուններ ենք ցանկանում քեզ, որ գարուններ միշտ ապրես, որ գարնան պես միշտ ծաղկես:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԱՆՏԻՆԸ ՉՊԱՐԱՊԵԼՈՒ ՊԱՏՃԱՌ ՉԷ

Մարզադահլիճները փակ են, մարզիչները չեն պարապում, իսկ մարզական երբեմնի աշխուժությամբ աչքի ընկնող տնամերձ մարզահրապարակները դատարկ են. կարանտին է: Ինչպե՞ս չկորցնել մարզական լավ վիճակը՝ մնալով տանը: Իրավիճակն անսովոր է բոլորի համար, մինչդեռ պարբերաբար պարապմունքների հաճախող մարզիկների համար՝ առավել եւս, քանի որ օրգանիզմը սովոր է էներգիայի համակարգված ծախսմանը մարզումների շրջանակում: Մարզիկների մոտ կարող է սթրես առաջանալ՝ կապված պարապմունքի բացակայության հետ: Ի՞նչ անել կուտակված էներգիայի հետ, ինչպե՞ս հաղթահարել պարապմունքի պարտադիր դադարի հետ կապված հոգեբանական սթրեսը: Այս հարցերին, եւ ոչ միայն, մեզ հետ ունեցած օնլայն հարցազրույցում պատասխանեց ԱՀ վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայի մարզիչ եւ ավագ խմբի մարզիկ Շահեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ:

- Շահեն, ինչպե՞ս պետք է վարվի մարզիկն այս իրավիճակում, որտե՞ղ ծախսի կուտակված էներգիան, երբ տանը ոչինչ չկա անելու, իսկ դուրս գալ չի կարելի:

- Բավականին դժվար հարց է մարզիկի համար, բայց ոչ նրանց, ովքեր կարող են այս ժամանակն օգտագործել ինքնազարգացմամբ զբաղվելով: Մարզիկը կարող է պարապել տնային պայմաններում, պահպանել լավ մարզավիճակը, ինչպես նաեւ ավելի շատ ժամանակ հատկացնել իր հանգստին:

- Իսկ տնային պարապմունքը կփոխարինի՞ իսկական պարապմունքին:

- Տնային պայմաններում պարապելն, իհարկե, չի կարող լիարժեք փոխարինել դահլիճի պարապմունքին, բայց պետք է ապահովել թեկուզ նվազագույն ֆիզիկական ծանրաբեռնվածություն տանը: Ընդհանրապես չի երաշխավորվում պարապմունքներում միանգամից դադար տալ, եթե չկան հատուկ ցուցումներ: Նվազագույն ծանրաբեռնվածությամբ պարբերաբար կատարվող ֆիզիկական վարժությունները կօգնեն պահպանել մկանների ակտիվությունը, ինչպես նաեւ օրգանիզմում կուտակված բացասական էներգիան կգտնի իր դուրս գալու ճանապարհը: Ճիշտ է, տնային պարապմունքը չենք կարող համեմատել մարզչի հրահանգների ներքո անցկացվող իսկական մարզական պարապմունքի հետ, բայց ինչպես մարզիկները, այնպես էլ բոլոր մարդիկ կարող են ակտիվ պարապել տանը մնալով, որն ավելի է մեծացնում կարանտինից դուրս գալու հնարավորությունը հուզական կայուն վիճակով եւ օրգանիզմի բարձր դիմադրողականությամբ:

- Կարեւո՞ր է, որ մարզիկը պահպանի պարապմունքի ժամը:

- Եթե հնարավորություն կա, այո: Պետք է այնպես համաձայնեցնել ընտանիքի անդամների հետ, որ մարզումները չխանգարեն ոչ մեկին: Կան ընտանիքներ, որոնցում մարզվում են բոլորը միասին: Սա շատ ողջունելի է: Կարելի է մարզվելու համար օգտագործել առավոտը: Առավոտյան մարզումները, հատկապես վաղ առավոտյան կատարվող լիցքային վարժություններն ավելի արդյունավետ են եւ հարմար են մենանալու համար, եթե դրա անհրաժեշտությունը կա:

- Կարո՞ղ է, արդյոք, մարզիչն օգնել իր սաներին եւ նպաստել նրանց ինքնուրույն մարզումներին, ցուցումներ տալ առանց նրանց հետ ֆիզիկական շփման:

- Մարզիչը կարող է հեռավար հաղորդակցման միջոցներով, տեսահաղորդակցման կամ ձայնային հաղորդագրությունների միջոցով կամ միգուցե պարզապես զանգով ուղղորդել իր սաներին համապատասխան մարզումների: Այս պայմաններում թերեւս ճիշտ կլինի օգտագործել այդ միջոցները: Բնական է, որ մարզիկը կարող է սթրես տանել՝ կապված պարապմունքների դադարի հետ: Մարզիչը կարող է քաջալերել, ոգեւորել նրան՝ պահպանելով անհրաժեշտ հեռավորություն:

- Մարզչի հետ շփումը պահելու եւ նրանից ուղղորդում ստանալու համար ստեղծված պայմաններում փաստորեն հեռախոս ունենալն էլ բավական է, իսկ մարզական գույքն ու մարզասարքերը ինչո՞վ փոխարինել, եթե տանը դրանք չկան:

- Մարզական գույքին ու մարզասարքերին փոխարինող բազմաթիվ պրակտիկ միջոցներ կարելի է փնտրել եւ գտնել համացանցում, եթե դրանք իսկապես անհրաժեշտ են: Բայց դրանց բացակայությունն էլ հոգ չէ: Կան այնպիսի հասարակ վարժություններ, որոնք կատարվում են առանց գույքի կամ մարզասարքի, իսկ արդյունավետությամբ չեն զիջում ուրիշ վարժությունների:

- Հավանաբար ինքներդ առաջնորդվում եք Ձեր խորհրդով՝ պահպանելով լավ մարզավիճակ եւ օրինակ լինելով Ձեր թիմակիցների ու սաների համար: Կարո՞ղ եք նշել առավել արդյունավետ որոշ վարժություններ, որոնք օգնում են Ձեզ եւ կօգնեն մեր ընթերցողներին ֆիզիկական լավ տվյալներ ձեռք բերել, ինչու չէ, բարձրացնել նաեւ ոգին:

- Իհարկե ինքս պարապում եմ տանը՝ լրացնելով մարզադահլիճում մարզումների բացակայությունը: Կատարում եմ ֆիզիկական դաստիարակության հիմնային վարժություններ, որոնք օգնում են ապահովել մարմնի ֆիզիկական անհրաժեշտ ծանրաբեռնվածություն եւ նպաստում են լավ հոգեվիճակ ունենալուն: Սեղմում գետնից, կքանիստ, պրեսի վարժություններ, իսկ որտեղ հնարավոր է՝ ձգումներ. սրանք բոլոր մարզիկներին լավ ծանոթ վարժություններ են, որոնց կատարման համար ընդամենը ցանկություն է հարկավոր: Հիշեցնեմ, որ մարզումները պետք է սկսել թեթեւ նախավարժանքից:

Ուրեմն՝ կարանտինի հետ կապված դժվարությունները կարելի է հաղթահարել ֆիզիկական վարժություններ կատարելով, այդպիսով ապահովելով օրգանիզմի բարձր դիմադրողականություն, մկանների ակտիվություն, բացասական էներգիայի դուրս նետում, սթրեսադիմացկունություն, ինչպես նաեւ որոշ չափով լրացնել պարապմունքի բացակայությունը:

ՍՊՈՐՏԸ՝ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ

2013 թ.-ից սկսած՝ ապրիլի 6-ին նշվում է Սպորտի միջազգային օրը: Օրվա խորհուրդը սպորտի՝ հանուն զարգացման եւ խաղաղության դերակատարության ամրապնդումն է: Սպորտային խաղերը, մրցաշարերը եւ ֆիզիկական կուլտուրայով զբաղվելը մեծ դեր են խաղում մարդկության զարգացման գործընթացում: Սպորտը կրթության, զարգացման եւ խաղաղության գործոններից մեկն է, որը նպաստում է համերաշխության, հանդուրժողականության, սոցիալական ներառման ամրապնդմանը տեղական, ազգային եւ միջազգային մակարդակներում: Սպորտի արժեքները, ինչպիսին են թիմային աշխատանքը, արդարությունը, կարգապահությունը, մրցակցի եւ խաղի կանոնների հանդեպ հարգանքը, հասկացվում են ամբողջ աշխարհում եւ կարող են օգտագործվել սոցիալական համերաշխության եւ խաղաղ գոյակցության համար:

Սպորտի միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվում են տարբեր մարզական խաղեր, առաջնություններ, միջոցառումներ: Ինչպես հայտնի է, թագավիրուսով պայմանավորված՝ պանդեմիան իր սպառնացող տեմպերով տարածվում է աշխարհով մեկ՝ ներառելով մեծ թվով երկրներ, եւ ֆիզիկական ու սոցիալական հեռավորության մեթոդները դառնում են սովորական երեւույթ, որպեսզի կանգնեցվի համաճարակի տարածումը: Մարզադահլիճների, մարզասրահների, լողավազանների, պարային ստուդիաների եւ խաղահարթակների փակումը նշանակում է, որ մենք չենք կարող կազմակերպել եւ մասնակցել անհատական կամ խմբային մարզական ու ֆիզիկական միջոցառումների: Մարզական հանրությունը լուրջ դժվարություններ ունի ողջ աշխարհում մտցված սահմանափակումների պատճառով: Բայց դա չի նշանակում, թե մենք չպետք է ֆիզիկապես ակտիվ լինենք: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խորհուրդ է տալիս սպորտով զբաղվելուն եւ ֆիզկուլտուրային հատկացնել 150 րոպե շաբաթվա մեջ՝ թեթեւ ծանրաբեռնվածությամբ մարզումներին, իսկ 75 րոպե շաբաթվա մեջ՝ ինտենսիվ պարապմունքներին: Այսինքն՝ բացի վերոնշյալ արժեքներից, սպորտը նաեւ առողջ ապրելակերպի կարեւորագույն տարրերից է: Մեր անհատական հմտություններով ու թիմային ոգու ուժով կարող ենք միավորել ջանքերը եւ կիսվել սպորտով զբաղվելու միջոցով առողջության ամրապնդման փորձով: Սպորտի միջազգային օրը կոչ է արվում լինել ակտիվ, պահպանել առողջությունը, ցուցաբերել հանդուրժողականություն ու ըմբռնում անհրաժեշտ հեռավորություն պահելու շրջանում: Թիմային ոգին կօգնի բոլորին՝ լուծել ծառացած խնդիրը:

Սպորտի հետ կապված թեմաների շուրջ զրուցեցինք Արցախի մարտարվեստների ասոցիացիայի նախագահ, Արցախի MMA հավաքականի մարզիչ Գարեգին ԱՂԱԲԱԼՅԱՆԻ հետ: Ասոցիացիան ստեղծվել է ոչ շատ վաղուց, բայց զգալի աշխատանքներ է տարել Արցախում սպորտի զարգացման, մեծ թվով մարզիկներ կոփելու եւ դաստիարակելու, միջազգային մրցահարթակներում մեր երկիրը աշխարհին ճանաչելի դարձնելու գործում:

- Գարեգին, ի՞նչ դեր ունի սպորտը մարդու կյանքում:

- Սպորտը մարդու կյանքում մեծ դերակատարություն ունի: Նախ՝ սպորտը տալիս է ինքնավստահություն, նպաստում է առողջ ապրելակերպին, հիգիենային, կարգապահությանը: Սպորտը շատ մարդկանց համար սնունդ է. ինչպես որ առանց սնվելու մարդ չի կարող ապրել, այնպես էլ շատ մարդիկ ուղղակի չեն կարող ապրել առանց մարզվելու:

- Ինչպե՞ս է Ձեր գլխավորած Մարտարվեստների ասոցիացիան ազդում Արցախում սպորտի զարգացմանը:

- Մարտարվեստների ասոցիացիան մեծ ազդեցություն է ունեցել արցախյան սպորտի վրա նախ նրանով, որ Արցախում զարգացրել ենք 21-րդ դարի համաշխարհային երկու մարզաձեւ՝ մուայ թայ եւ MMA: Ասոցիացիայի շուրջն ենք համախմբել շուրջ 400 մարզիկ, ունենք չեմպիոններ: Անցած տարի Արցախում կազմակերպել ենք չորս պրոֆեսիոնալ մենամարտերով HAYFC-1 մրցաշար, որի մասին առայսօր ողջ Արցախն է խոսում: Նախատեսում ենք կազմակերպել երկրորդը՝ HAYFC-2 մրցաշարը: Հույս ունենք, որ համաճարակը կվերջանա, եւ հնարավորություն կունենանք ամռանը մրցաշար կազմակերպել:

- Ի՞նչ խնդիրների եք առնչվել Ձեր գործունեության ընթացքում:

- Իմ մարզչական գործունեության ընթացքում հանդիպել եմ բազում խնդիրների, բայց պարզ ճակատով ասում եմ, որ հաղթահարել եմ դրանք, այն էլ՝ հաճույքով: Ունեցել ենք ամենատարբեր խնդիրներ՝ սկսած մարզադահլիճների բացակայությունից: Բացի պետական աջակցությունից ունենք հովանավորներ, ընկերներ, բարեկամներ, որոնք օգնում են մեզ՝ կանգնելով սպորտի կողքին եւ անձամբ մեր կողքին:

- Ձեր կարծիքով ի՞նչ վիճակում է սպորտն Արցախում, սպորտի միջոցով աշխարհին ճանաչելի դառնալու մարտավարությունը արդարացնո՞ւմ է իրեն:

- Խաղային մարզաձեւերը փոքրինչ նահանջ են ապրում, իսկ անհատական գոտեմարտային կամ մենամարտային մարզաձեւերն առաջխաղացում ունեն, ավելանում են խմբերը, շատացել է պարապողների քանակը, ինչը լավ է. քանի որ մենք մշտապես կռվի մեջ ենք, այն պետք է շատանա: Ճանաչելի դառնալու հարցին եթե սթափ նայենք, կհասկանանք, որ եռագույնը կբարձրանա այն մարզաձեւերի շնորհիվ, որոնք ունեն պրոֆեսիոնալ մենամարտեր: MMA, բռնցքամարտ, թայ բոքս, կա-1 մարզաձեւերում մեր մարզիկների հաջողություններն մեր անունն ավելի շուտ հնչելի կդարձնեն աշխարհում: Կարեւոր է, որ ոչ օրինական մարզաձեւ կոչվածները, այսինքն, որոնք օրենքով չեն գործում Արցախում, դադարեցնեն իրենց գործունեությունը: Եթե այդ մասով չկա համապատասխան օրենք, ուրեմն պետք է մշակվի: Ապօրինի գործող մարզաձեւերը խանգարում են սպորտի զարգացմանը:

- Լինելով մարզիչ եւ, բնականաբար, առողջ ապրելակերպի հետնորդ՝ ի՞նչ կհորդորեիք Ձեր սաներին եւ քաղաքացիներին կարանտինի պայմաններում լավ մարզավիճակ պահելու համար:

- Պետք է մարզումները շարունակել տանը, թեկուզ բակում, մաքուր օդում: Փառք Աստծո, Ստեփանակերտի չորս կողմն անտառներ են, կարող են վազել անտառներում, մարզումներ կատարել: Ցանկացած մարզիկի համար երկուսով երկու տարածքը բավական է, որ պատշաճ մարզումներ անի մարզավիճակը 50-60 տոկոսով լավ պահելու համար: Մարզիկներին, ինչպես եւ քաղաքացիներին խորհուրդ եմ տալիս նորմալ սնվել, վիտամիններով հարուստ սնունդ ընդունել եւ մարզվել: Ֆիզիկական ծանրաբեռնվածությունը թույլ չի տա, որ մարմնի դիմադրողականությունը ցածրանա:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՀԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ

(Նամակների)

Սկիզբը՝ «Լուսարարի» հ. 7, 8-ում

ՎՐՈՒՅՐ, ԶԱՎԱԿՍ

Ասելիքի առատությունից չգիտեմ ինչից սկսել և որն ասել: Դու արդեն քո տարիքից առաջ անցնելով՝ տղամարդ ես դառնում: Իմացիր, տղամարդուն բնորոշ առանձնահատկություններից մեկը զգացմունքները հաղթահարել կարողանալն է: Ամեն ինչում միշտ եղիր սառնասիրտ ու հետևողական:

Ու՝ սովորիր: Այն, ինչ ենթակա է մարդու գիտակցական ըմբռնմանը, յուրացրու, քանզի ամեն ինչ էլ կյանքում պետք է գալիս երբևէ: Այսօր սովորածը քո վաղվա անելիքի կեսն է արդեն: Սովորիր շատ լեզուներ, մաթեմատիկա, աշխարհագրություն, դրանք առավել օգտակար են կյանքում քո արժանի տեղը գտնելու համար:

Բարեհաճ եղիր բոլորի նկատմամբ ու համբերատար: Քեզ կսիրեն բոլորը դրա համար, և դու հեշտությամբ կհաղթահարես պրոբլեմներդ: Աշխատիր երբեք թշնամի չվաստակել: Քո հաջողությունների համար կարող են քեզ նախանձել, խանգարել ինչ-ինչ գործողություններում, բայց դա թշնամանքի մի վերագրիր, որովհետև թշնամանքը քաղաքական կատեգորիա է, նորմալ մարդկային հարաբերություններում, նույնիսկ ժամանակավոր՝ այն տեղ չունի:

Դու այդ բոլորի դրականն ունես, գիտեմ, քո գենի մեջ կա ժառանգված այն անհրաժեշտը, որը քեզ սիրելի է դարձնում շրջապատում: Պարզապես ավելորդ չեմ համարում կրկնել այդ խրատները, որովհետև քո ճկվող տարիքի համար դրանք պետք են:

Հիշիր, որ հրաշալի հարազատություն ունես, որոնցից յուրաքանչյուրը առանձին մի սիրով է քեզ հետ կապված: Քնելուց առաջ բոլորին մեկ-մեկ հիշիր ու կոպերիդ տակ տեղավորիր նրանց: Սակայն տես, որ կարոտախտին կուլ չգնաս: Ցերեկը՝ ուսումնառության ժամերին, կենտրոնացիր միայն դասերիդ ու առօրյա հոգսերիդ շուրջ, աշխատիր քիչ հիշել նրանց՝ ծնողներիդ, եղբայրներիդ, քրոջդ ու մյուս հարազատներիդ, մանկութ ընկերներիդ. դա քեզ ավելի առույգ ու գործնական կպահի:

Լավ է, որ սպորտով զբաղվում ես, անառողջ մարմնի մեջ գիտելիքն ու իմաստությունը ոչինչ են: Մեծ սպորտի մասին երազել պետք չէ (թեկուզ երազելն ինքնին վատ պրոֆիլակտիկա չէ), դու մտածիր միայն քո մարմինը միշտ առողջ ու կայտառ պահելու մասին: Սնվիր կանոնավոր ու պատշաճ և քնիր՝ ինչքան որ սահմանված է նորմայով:

Ընդհանրապես, այն ռեժիմը, որ գործում է ձեզ մոտ, շատ օրինակելի է ու օգտակար: Ձգտիր բոլոր կանոններով ապրել, այն կանոններով, որոնք հաստատված են Մելքոնյան կրթական հաստատության ղեկավարության կողմից:

Դու հիմա գտնվում ես միանգամայն ուրիշ միջավայրում, որտեղ խելքն ու համեստությունը լավ այցետոմսեր են մարդկային բարության դռների համար: Քո շնորհքի բոլոր դրսևորումներն ի ցույց դիր, աչքի ընկիր ամեն ինչում: Հիմիկվանից աչքի ընկածը հետագայում հեշտ կընթանա իր կյանքի ճանապարհով: Թիվ 7 միջնակարգ դպրոցում առայսօր քեզ սիրով են հիշում, շարունակիր այդպիսին լինել նաև Կիպրոսում: Իմացիր, մեծ ձուկ դառնալու համար մեծ ջրեր են պետք: Դու մեծ ջրերի մեջ ես ընկել ու պիտի մեծ ձուկ դառնաս: Առածի լեզվով ասացի, համոզված եմ, որ ասածս ճիշտ ըմբռնեցիր:

...Եվ մի քիչ էլ՝ իմ մասին: Ամեն ինչ նորմալ է ինձ մոտ՝ «հին կոտրած տաշտակը»: Կարևորը՝ առողջությունս լավ լինի, մնացածը ստացվելու բան է: Նոր տարին առանց քեզ դիմավորեցինք, քո կենացը անընդհատ խմելով: Քեզանով հպարտանալու շատ բան ունենք, տղաս, ձգտիր միշտ մնալ հպարտության այդ բարձունքի վրա:

Մաման էլ ամեն օր քո մասին է մտածում, քո անվամբ թռչում: Վարդուհուն (երբ իրեն խելոք է պահում) քնելուց առաջ հեքիաթ եմ պատմում միշտ: Ու միշտ երկնքից ընկած խնձորները նրա պահանջով հասնում են «Կիպրոսում սովորողին»՝ քեզ: Այդպիսի գորովագութ քույրիկ ունես, բա՞:

Վարուժանն ու Վահեն էլ նույնն են, ամեն մեկը՝ «իր դարդին»: Վարուժանը քոլեջում գերազանց է սովորում, «էրմենի ղուլդուրը» նույնպես՝ դպրոցում:

Այսքանը: Գրկում ու համբուրում եմ՝

Քո հայր՝ Կիմ Գաբրիելյան
04. 01. 99
Արցախ

ԲԱՐԵՎ, ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՅՐԻԿ, ՄԱՅՐԻԿ, ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՎ ՔԱՂՑՐԻԿ ՔՈՒՅՐԻԿ

Հուսով եմ, որ բոլորդ էլ առողջ եք: Ես նույնպես առողջ եմ, և հարկ չկա իմ մասին մտածել:

Հարգելի մայրիկ, հուսով եմ, որ Դուք եք կարդում նամակս, և գրում եմ Ձեզ: Բայց դա չի նշանակում, թե մեր ընտանիքի մնացած անդամներին անտեսում եմ: Ընդհակառակը, բարևում եմ բոլորին և Ձեզանից խնդրում՝ բոլորին մեկ-մեկ ջերմ համբուրել:

Թանկագին մայրիկ, ինչպես նախորդ նամակները, այնպես էլ այս նամակը գրում եմ հապճեպ, ինչքան կարողանում եմ՝ արագ, քանի որ ունեմ միայն մի քիչ ժամանակ: Ասեմ նաև, որ գրում եմ չորեքշաբթի օրը և վաղը (հինգշաբթի) ունեմ ֆրանսերենի թեստ (ստուգողական) և պետք է շատ լավ սովորեմ:

Ինչ որ է, մի նամակը, կարծում եմ, բավական է: Իսկ ինչ վերաբերում է տատիկներիս, ընկերներիս և ուսուցչուհիներիս (ուսուցիչ քիչ ունեմ), ապա կարծում եմ, որ ողջույնն անգամ քիչ չէ: Այնպես որ, բարևեք բոլորին և տատիկներին ու պապիկներին համբուրեք իմ կողմից: Իսկ քաղցրիկներին՝ Արմենին և Տաթևին, ջերմ-ջերմ համբուրեք նույնպես:

Քնքուշ մայրիկ, այսքանը իմ բարևագիրն է, այժմ՝ բուն նամակը:

Արդեն 2-3 շաբաթ է անցել, ինչ դուք զանգել եք ինձ: Եվ ես խոսք էի տվել E-mail ուղարկել: Իսկ դուք հավանաբար սպասում եք: Խորհուրդ կտայի չսպասել, քանի որ այն օրվանից սկսյալ դեռ չեմ ուղարկել ոչինչ: Պատճառն այն է, որ դպրոցի համակարգչային սենյակը, որտեղից կարող եմ E-mail ուղարկել, փակ էր:

Իսկ մի ուրիշ պատճառն այն է, որ այն օրը, երբ Ա, Բ, Գ դասարանները կարող են մտնել համակարգչի սենյակ, ֆուտբոլ ունեմ և չէի կարող ուղարկել: Բայց հիմա ֆուտբոլի օրերը արդեն փոխել ենք, և եթե համակարգչի սենյակը բաց լինի, կարող եմ E-mail ուղարկել: Այնպես որ, ամեն շաբաթ ստուգեք, միգուցե հասնի: Սակայն այժմ ամենահուսալի կապը նամակն է, և միգուցե կարողանամ շուտ-շուտ նամակ ուղարկել: Եվ ցանկալի է, որ դուք էլ ուղարկեք, եթե եկող չկա՝ փոստով: Փոստի համարը «1907»-ից փոխվել է «21907»-ի:

Պաշտելի մայրիկ, նախորդ նամակում ասացի, որ բացի թրումփետի դասերից հաճախում եմ նաև դաշնամուրի դասերի: Բայց հիմա կարող եմ ասել, որ չեմ գնում, ինչպես ասել էի, բացի ֆուտբոլից, ինքս թեթև աթլետիկա եմ պարապում: Եվ դա կարող եմ անել թրումփետի դասերից հետո, որը ես հաճախում եմ գրեթե ամեն օր: Եվ միայն դրանից հետո կարող եմ թեթև աթլետիկա պարապել: Բայց այդ ժամին ես դաշնամուր ունեի: Եվ ընտրեցի սպորտը, որն ինձ համար ավելի կարևոր է: Բայց ամենևին չեմ փոշմանում, քանի որ թրումփետի հաճախում եմ, և նշանակություն չունի, թե ինչ տեսակի երաժշտություն եմ պարապում : Կարևորն այն է, որ երաժշտություն պարապեմ: Եթե կարողանամ թրումփետ նվագել, կկարողանամ նաև դաշնամուր նվագել:

Անուշիկ մայրիկ, արդեն մոտ երկու ամիս է, ինչ տեղափոխվել եմ Բ«ա» դասարան: Սկզբնական շրջանում մի քիչ դժվար էր սովորելը. դժվար էին դասերը, դժվար էին նաև նոր ուսուցչուհիների խոսելակերպերը և այլն: Սակայն արդեն բավականին ժամանակ է անցել, և արդեն հարմարվել եմ Բ«ա» դասարանին:

Թանկագին մայրիկ, պատիցս կախված օրացույցը օրըստօրե «զարդարվում» է. անհամբերությամբ օրեր եմ ջնջում:

Հարգելի մայրիկ, այսքանն է իմ նամակը. շատ նորություններ չկան:

Ջերմ համբույրներ բոլորիդ՝ Վրույրից
17.02.99թ.

ԲԱՐԵՎ, ՀԱՐԳԵԼԻ ՄԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ, ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՇԻԿ ՔՈՒՅՐԻԿ

Սիրելի ծնողներ, ինչպես տեսնում եք, նամակս սկսում եմ նույն ձևով, ինչպես նախորդը: Բայց չեմ ասում, թե գրում եմ նույն բաները: Աշխատում եմ գրել ավելի թարմ բաներ, որոնք հավանաբար ձեզ հետաքրքրում են:

Հարգելի ծնողներ, մարտի 2-ին՝ երեքշաբթի, դասի ժամանակ, երբ հանձնարարություն չէր տվել մեր ուսուցիչը, որոշեցի E-mail գրել: Ճիշտ է, ժամանակս քիչ էր (15 րոպե, բավական ժամանակ է պահանջվում մտնել Eudoria Light (ծրագիր, որտեղից կարող եմ E-mail ուղարկել), բայց որպես առաջին նամակ՝ քիչ չէր: Եվ ասեմ, որ ուղարկել եմ ձեր ուղարկած նոր համարով՝ edishn@mbox. amilink.net: Այնպես որ, աչքներդ վրան պահեցեք, հնարավոր է, որ տեղ հասնի: Իսկ եթե պատահաբար ստանաք, անմիջապես պատասխանը գրեցեք E-mail-ով կամ նամակով:

Սիրելի ծնողներ, կյանքն այստեղ միօրինակ է անցնում, արդեն գիտենք, թե հաջորդ շաբաթ ինչ ենք անելու: Կամ հաջորդ օրը ինչ կլինի: Այնպես որ, շատ ուրախ չի անցնում, և մենք արդեն ձանձրանում ենք Մելքոնյանի կյանքից: Սակայն, հակառակ գիշերօթիկի, դպրոցում դասերը հետաքրքիր են անցնում: Արդեն հաճախ են դարձել նախագծերը՝ համարյա յուրաքանչյուր առարկայից: Շատ դասերի ժամանակ վիդեո-ֆիլմեր ենք նայում, բայց ոչ այդտեղի արտասահմանյան «боевик»-ների պես: Օրինակ, աշխարհագրության մի պահի ժամանակ դիտեցինք հրաբուխների և երկրաշարժերի մասին՝ թե ինչպես են առաջանում, ինչու են առաջանում, ինչպես են վնասում մարդկանց: Եվ այս բոլորը նայում ենք անգլերենով. չասեմ թե գովում եմ, բայց բավականին հասկանում եմ:

Դուք արդեն գիտեք, որ անցնում եմ նաև ֆրանսերեն: Շատ թե քիչ գիտեմ խոսել: Դժվարությունների դեպքում «օգնականներ» ունեմ:

Թվաբանությունը կամաց-կամաց հետաքրքրանում է, արդեն անցնում ենք երկրաչափություն՝ «Խաչադիր անկյուններ»: Բայց հանդիպում են նաև շատ երեխայական բաներ: Համենայն դեպս, շատ հեշտ է:

Գիտությունը, դուք արդեն երևի գիտեք, մի քանի առարկաների խառնուրդ է: Սկզբում անցնում էինք «Բջիջներ»-ը, որը ես վաղուց գիտեի: Բայց այժմ անցնում ենք, կարելի է ասել, անատոմիա: Անցնում ենք մարդու օրգանների մասին: Սկզբում ասում էի, թե շատ անհետաքրքիր է, բայց այժմ շատ հետաքրքիր է դարձել, քանի որ անցնում ենք ինձ համար անծանոթ բաների մասին:

Անգլերենը սկզբնական շրջանում դժվար էր: Բայց այժմ կարող եմ ասել, որ քիչ-քիչ հեշտանում է: Ուսուցչուհու հետ խոսելը այլևս դժվար չէ: Կարծում եմ՝ մի բան եզրակացրիք սրանով:

Հայերենի միակ դժվարությունը կայանում է ուղղագրության մեջ: Իսկ քերականությունից անցնում ենք բայերի խոնարհումը՝ հաստատական և ժխտական՝ սահմանականի ձևերը:

Իսկ թեմաները վաղուց արդեն ծանոթ են մեզ: Անծանոթ թեմաներ քիչ են պատահում:

Հարգելի ծնողներ, դուք հավանաբար գիտեք, որ մարտի 10-ի մոտերքը վերջանում է II եռամսյակը: Բայց անհամբերությամբ չեմ սպասում վիճակացույցերին (առաջադիմության թերթիկ - *խմբ.*), քանի որ գիտեմ, որ շատ բարձր գնահատականներ չեմ տեսնի: Բայց սա թող չհուսախաբի ձեզ: Կգա ժամանակը, և դուք կտեսնեք:

Սիրելի ծնողներ, ինչ եկել եմ այստեղ, բավականին ընկերներ եմ գտել: Կան շատ հավատարիմներ և միայն սովորական, ձևական ընկերներ: Լավագույն ընկերների շարքում է պարսկահայ Մայքլը: Ամեն օր, ավելի ճիշտ, ամբողջ օրը մեր սենյակում է, կամ՝ հակառակը, մենք ենք իրենց սենյակում: Երբեք այդպիսի ընկերներ չեմ տեսել՝ այնքան անկեղծ, այնքան խելացի և ընկերասեր: Նույնիսկ այնքան վստահելի է, որ թողնում եմ մեր սենյակում և տեղ գնում՝ խախտելով ձեր խորհուրդը՝ «Երբեք մի վստահիր ամենամոտիկ ընկերոջդ»: Բայց մի վախեցեք, մենք էլ վստահելի անձեր ենք, և նա էլ մեզ է վստահում մնալ իր սենյակում:

Հարգելի ծնողներ, կարծում եմ՝ շատ խոսեցի: Այսքանը կարծեմ բավական է: Ցանկանում եմ հաջողություն ամենուրեք:

Ցտեսություն: Բարևեցեք բոլորին-բոլորին:

Ջերմ համբույրներով՝ Վրույր
05.03.99թ.

ՀԱՐԳԵԼԻ ԵՎ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ

Մարտի 23-ին ստացա ձեր լայնածավալ նամակը և մեծ ուրախությամբ կարդացի: Եվ երբ կարդում էի, մտքով փոխադրվեցի այդտեղ: Բայց լավ է, որ հետո ֆուտբոլ ունեի, թե չէ ընդմիշտ «կմնայի» այդտեղ: Նախ և առաջ ասեմ, որ կարոտս վաղուց «մեղմացել» է: Այսինքն՝ այն կարոտը չէ, ինչպես առաջ՝ անհագ ջրապտույտ: Այլ միշտ հիշում եմ ձեզ, բայց մտածելով, որ մի օր պիտի վերադառնամ այդտեղ: Այնպես որ, արդեն բոլորովին հարմարվել եմ Մելքոնյանին: Նաև վերջերս շատ են կազմակերպվում թատրոններ, համերգներ, պարահանդեսներ և, վերջապես, որն ինձ է վերաբերում՝ ֆուտբոլի առաջնություններ: Փետրվարի 13-ին մեր ֆուտբոլի թիմը գնաց Կիպրոսի անգլիական դպրոցը, ուր պետք է տեղի ունենար ֆուտբոլի առաջնությունը Կիպրոսի 9 բարձրագույն դպրոցների միջև: Բայց տեղ չբռնեցինք, միայն՝ 6-րդ: Սակայն հոգ չէ. չկա հաղթանակ առանց պարտության: Այսքանով ուզում եմ ասել, որ արդեն հետաքրքիր օրեր են լինում, և Մելքոնյանը դուրս է եկել:

. . . . . .

Սիրելի մայրիկ, այժմ ուզում եմ գրել առօրյա կյանքիս մասին:

Արդեն II եռամսյակը ունեցավ իր վախճանը՝ եռամսյա «թագավորությունից» հետո: Եվ իր «թագավորությունը եղավ անկման մի շրջան»: Երբ վիճակացույցները ստանաք, կտեսնեք:

Սիրած առարկաներից Science-ն է, հակառակ նրա, որ սկզբում անհետաքրքիր էր: Այժմ դարձել է բավական հետաքրքիր: Եվ տա Աստված, քո երազանքը իրականանա՝ «Եվ նրանցից մեկն էլ կդառնա իմ որդին, որը տնից-տեղից հեռու քայլում է գիտության քարքարոտ ճանապարհով»:

Շարունակում եմ բազմապիսի գրքեր կարդալ՝ հակառակ այդտեղի, որ արկածային էի կարդում: Այժմ կարդում եմ թե՛ արկածային, թե՛ պատմական, թե՛ մանկական հեքիաթներ և պատմվածքներ (բայց անգլերենով), թե՛ համաշխարհային գրականություն: Իտալական գրականության մասին ծրագիր (project) պատրաստելիս հանդիպեցի Դանթե Ալիգերիի անունին, որը (հանրագիտարանի մեջ) համաշխարհային գրականության գլխավոր դեմքերից է: Եվ ես ցանկացա կարդալ նրա ստեղծագործություններից: Եվ այժմ կարդում եմ նրա «Աստվածային կատակերգություն. դժոխք» գիրքը:

Սիրելի մայրիկ, ինչպես գիտես, արտադասարանային տարբեր գործունեությունների մասնակցում եմ: Սակայն երաժշտությունից, երգից, ֆուտբոլից բացի նաև սքաուտության մեջ եմ: Շատ հետաքրքիր բան է՝ փոքրերի բանակ: Արդեն մի անգամ բանակումի ենք գնացել՝ 2 օրով: Գիշերները յուրաքանչյուրս հերթով հերթապահ էինք կանգնում՝ ուրիշների հարձակումներից վրանը պաշտպանելու (ձևն այդպես է. բանակումի դեպքում ուրիշները հարձակվում են՝ խմբի դրոշակները գողանալու: Յուրաքանչյուր խումբ ունի իր դրոշակները):

Թանկագին մայրիկ, երեկ հայաստանցի տղաներից մեկը երկու տեսաերիզ բերեց՝ Ցվետանա Պասկալևայի «Ղարաբաղյան վերքերը»: Ղարաբաղյան ազատագրական շարժման մասին էր: Ամբողջ դպրոցը հավաքվել էր նայելու այդ ահավոր տեսարանները, թե ինչպես էին վիրավորներին տանում՝ ոմանց ոտքը փշրված, ոմանց մարմինները ծակծկված բեկորներից: Եվ երբ ցույց էին տալիս ավերված Ստեփանակերտը, տեսա քանդված մեր... տունն ու դպրոցը: Այնքա՜ն ծանոթ էր Եղիշե Չարենցի գլխաքանդակը: Բայց մնացածը նման չէր այժմյան դպրոցին, քանդված ու ավերված էր: Իսկ մեր շենքի միայն մի փոքր մասը երևաց:

. . . . . .

Սիրելի մայրիկ, այսքանով ուզում եմ եզրափակել նամակս՝ շնորհավորելով բոլորիդ Սուրբ Զատիկը:

Խնդրում եմ տիկին Թամրազյանի նամակը գաղտնի հանձնեք, քանի որ միայն նրան եմ գրել, որովհետև գիտեմ, որ կարող է «փնթփնթալ»:

Այսքանը: Կարոտալի համբույրներով՝ քո որդի՝ ՎՐՈՒՅՐ:

28. 04. 99 թիվ, Նիկոսիա, Մ.Կ.Հ.

Հ.Գ. Թանկագին մայրիկ, ամբողջովին մոռացել էի ամենագլխավորի մասին՝ Ապրիլի 7-ի մասին:

Շնորհավորում եմ մեր տան գեղեցիկ սեռի անդամների Ապրիլի 7-ը: Ցանկանում եմ անսահման գեղեցկություն: Այնպիսի անեզերք գեղեցկություն, ինչպես որ են:

(շարունակելի)

Վրույր ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 16.04.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: